«Աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը լուծել բնապահպանական խնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները»
ԾՐԱԳԻՐ **№ UB 4200665**

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան և ընդհանուր տեղեկություններ - 3 -8 էջ

2. Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների ,

Ծրագրի առաջադրանքերը, Գործունեություն 1.1

- **Գործողություն 1.1.1** ---------- 8 -33 էջ
- **Գործողություն 1.1.2** ---------- 33-50 էջ
- **Գործողություն 1.1.3** ---------- 50-55 էջ
- **Գործողություն 1.1.4** ---------- 55-66 էջ

3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները - - - - - - - - - - - - - - - - - - -

Գործունեության 2015թ. տարեկան հաշվետվություն

1.Նախաբան և ընդհանուր տեղեկություններ

Սույն ծրագրի նպատակն է նպաստել շրջակա միջավայրի լավ կառավարման և համայնքային անվտանգության սկզբունքների ներդրմանը՝ Հայաստանի Օրհուս Կենտրոնների միջոցով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, տեղական և ազգային մակարդակներում աջակցելով ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Օրհուսի Կոնվենցիայի իրականացմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Օրհուս կենտրոնների առաքելությունն է՝ աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը համատեղ ուժերով լուծել բնապահպանական հիմնախնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները, այս ծրագրի իրականացման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Ինչպես միշտ, այս ծրագրի շրջանակներում նույնպես, կենտրոնները հարթակ են հանդիսանում պետական պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար՝ համագործակցելու, հանդիպելու, քննարկելու, տեղեկատվություն փոխանակելու, շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու և լուծման ուղիներ գտնելու համար:

Հաշվի առնելով, որ միայն հասարակության իրազեկումը այս կամ այն նախագծի վերաբերյալ, դեռևս բավարար նախապայման չէ հանրության ակտիվ և արդյունավետ մասնակցություն ապահովելու համար, մենք առավել ուշադրություն ենք դարձրել՝ շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող նախատեսված գործողություններով սպասվելիք փոփոխությունների վերաբերյալ հանրությանը վաղ իրազեկելու, նախատեսվող կամ տարվող աշխատանքների մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու և տրամադրելու, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ քննարկումների կազմակերպման, համապատասխան հանրային կարծիքի ձևավորման ու այլընտրանքային առաջարկությունների համատեղ մշակման ուղղությամբ:

Ստորև ներկայացվում է կենտրոնների իրականացրած միջոցառումներն ըստ դրանց տարատեսակների.

Միջոցառում	Քանակ
Ընդամենը իրականացված միջոցառումներ	540
Այդթվում.	
Տեղեկատվության մատչելիությանն ուղղված	267
Հասարակական, կլորսեղան-քննարկումներ	52
Հանրայինլսումներ	30
Գործնականաշխատանքներ և արձագանքներ	29
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվականհանդիպումներ	89
Դասընթացներ, սեմինար-քննարկումներէկոկրթականմիջոցառումներ	75
Շնորհանդեսներ	8
Միջազգայինհանդիպումներ	6
Ազգային մակարդակով հանդիպումներ, սեմինարներ	12
Բոլոր կենտրոնների համատեղ աշխատանքային հանդիպումներ, կենտրոնների աշխատակիցների վերապատրաստումներ	4
Փորձագիտական խորհրդի նիստեր	10

Ըստ ծրագրի նպատակին հասնելու ժամանակացույցով նախատեսված գործողությունների, ինչպես նաև ընթացքում ծագած խնդիրներին լուծում տալու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում, Օրհուս կենտրոնների նախաձեռնությամբ, մասնակցությամբ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացվել է **540** միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ՝ **267,** հասարակության մասնակցության ուղղությամբ՝ **52,** որից 5 դեպքերում նախաձեռնվել են մեծամասշտաբ՝ ազգային մակարդակով կամ մի քանի մարզերի ընդգրկմամբ հասարակական քննարկումներ, ապահովվել է ակտիվ մասնակցություն **30** հասարակական լսման, իրականացվել է արդարադատության մատչելիության ապահովմանն ուղղված **2** ու էկոկրթական **75** միջոցառում, որոնց մասնակցել են ընդհանուր թվով **4608** մարդ, այդ թվում՝ **2136** տղամարդ և **2472** կին:

Քննարկված հարցերի կամ նախագծերի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվությունը տարածվել է շահագրգիռ կողմերի շրջանում: Կենտրոնների տարածքը, բնապահպանության ոլորտի միջոցառումներ անցկացնելու նպատակով **28** անգամ տրամադրվել է քաղաքացիական հասարակության տարբեր նախաձեռնությունների և կազմակերպությունների:

Այսօր կենտրոններն ընդհանուր առմամբ իրենց գրադարաններում և տեսադարաններում ունեն ավելի քան 1500 անուն գրականություն և մոտ 100 անուն տեսանյութերի խտասկավառակ:

Այս տարի ևս Օրհուս կենտրոնների ուշադրության կենտրոնում է եղել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի Հայաստանի մասին կայացրած որոշումների լուսաբանումն ու դրանց պահաջների կյանքի կոչման ուղղությամբ տարվող աշխատանքներին աջակցությունը: Դրանց մասին Հայաստանի Օրհուս կենտրոնները մշտապես բարձրաձայնել են, թե պատկան մարմինների, թե հանրության հետ հանդիպումների ժամանակ:

Բավականին լայն անդրադարձ է կատարվել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2014թ. «Գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ տեղ գտած դիտողություններին, ՕԿ-ի համապատասխանության կոմիտեի առաջարկություններն օրենսդրության մեջ չամրագրելու և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքով հանրային մասնակցության գործընթացն ավելի բարդացնելու հանգամանքներին: Նշենք նաև, որ վերոհիշյալ օրենքի նախագծում առկա թերությունների մասին կենտրոնները բարձրաձայնել են դեռևս 2013թ., նամակներ ուղղելով հանրապետության նախագահին և ՀՀ ԱԺ նախագահին՝ հիշեցնելով, որ ՀՀ կառավարությունը չի կատարել ազգային օրենսդրությունը Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու իր պարտավորությունները.

http://aarhus.am/letters/letter%20to%2010.12.2013.pdf:

http://aarhus.am/letters_2015/Answer%20from%20MNP%20-%20orxuscanc.pdf/

Օրհուս կենտրոններն իրականացրել են քայլեր քաղաքացիական հասարակությանն Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության Կոմիտեի V/9a որոշման առնչությամբ ՀՀ կառավարության առաջին ընթացիկ զեկույցի վերաբերյալ Կոմիտեի կողմից առաջընթացի գնահատման առաջին եզրակացության մասին իրազեկելու ուղղությամբ, որտեղ նշված է, որ առաջարկություններն ու դիտողությունները հաշվի չառնելու դեպքում ընդհուպ կարող է

հայտարարություն արվել անհամապատասխանության մասին, Կողմին զրկել կոնվենցիայի անդամակցությամբ ունեցած արտոնություններից: Սրան հետևել են բազմաթիվ հրապարակումներ:

http://www.ecolur.org/hy/news/officials/aarhus-convention-compliance-committee-takes-certain-measures-to-armenia-up-to-probable-convention-termination/7790/

http://www.azatutyun.am/content/article/27349543.html

http://www.panarmenian.net/arm/news/200240/

Հաշվի առնելով մեծ հետաքրքրությունն ու քաղաքացիական հասարակության մտահոգությունը՝ Օրհուս կենտրոնների նախաձեռնությամբ անցկացվել է հասարակական քննարկում, որին Օրհուսի համաձայնագրի ազգային համակարգողի և պատասխանատու նախարարությունների համապատասխան ներկայացուցիչների բացակայության պատճառով բարձրացված հարցերը մնացին անպատասխան: Քննարկման մասնակիցների որոշմամբ Հայաստանի Օրհուս կենտրոնները պատասխանատու բոլոր մարմինների մասնակցությամբ քննարկում կազմակերպելու խնդրանք հղեցին ՕԿ-ի ազգային համակարգողին:Բացի այդ ծրագրի հասարականութան հետ կապերի պատասխանատուն աջակցել է Էկոդաշինքին՝ կազմել Բնապահպանության նախարարին ուղղված նամակ, որտեղ հայտնվում է Կոնվենցիայի պահանջները պատշաճ իրականացնելու գործում ՔՀԿ-ների աջակցություն ցուցաբերելու պատրաստակամության մասին http://aarhus.am/images/Yerevan/24.11.15-%20letter%20to%20focal%20point.pdf:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնները համատեղ հետևողական աշխատանք են տարել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման ուղղությամբ, մասնավորապես.

- Օրհուս կենտրոնները ՀՀ ԲՆ-ին ներկայացրել են նախագիծը քաղաքացիական հասարակության, այդ թվում համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկելու և դրանում լրացումներ անելու առաջարկ, որ նրանց կողմից ընդունվել է ի գիտություն (http://aarhus.am/letters_2015/Namak_BN_11_09.pdf)
- Հայաստանի Օրհուս կենտրոնները ՀՀ Ֆինանսների նախարարությանը ներկայացրել են բնօգտագործման և բնապահպանական վճարների նպատակային օգտագործման վերաբերյալ առաջարկություններ և պահանջել են քննարկել ներկայացված առաջարկությունները և

նախագծի վերաբերյալ վերանայել նախարարության դիրքորոշումը (http://aarhus.am/letters_2015/18.08.15_finnax..pdf, http://aarhus.am/letters_2015/18.08.15_finnax..pdf՝ (http://aarhus.am/letters_2015/finnax_patasxan_15_09.pdf):

Չստանալով սպառիչ պատասխան՝ կրկնակի հարցում է ուղղվել նախարարությանը՝ տեղեկանալու, թե ինչու մեր առաջարկները չեն քննարկվել և իրենց որոշումը չի վերանայվել: Սակայն նախարարությունը կրկին տեղեկացրել է իր նախկին դիրքորոշման անփոփոխ մնալու մասին:

- Կենտրոնները օրենքի փոփոխման նախագիծը համայնքային կամ մարզային մակարդակում լուսաբանելու առաջարկ են ներկայացրել ԲՆ-ին http://aarhus.am/letters_2015/Namak_BN_11_09.pdf, որպեսզի համայնքները տեղեկացված լինեն և առաջարկներ ներկայացնեն իրենց համար կարևոր այս նախագծի վերաբերյալ: Հաշվի առնելով առաջարկը՝ ԲՆ-ն նախաձեռնել է քննարկում՝ հրավիրելով ՕԿ-ներին և համայնքներին, բայց ցավոք միայն Տավուշի մարզպետարանի ներկայացուցիչն էր ժամանել Երևան, ուստի ՕԿ ներկայացուցիչները կրկին առաջարկել և իրենց աջակցությունն են հայտնել տեղական մակարդակում նախագծի շուրջ քննարկումների կազմակերպման գործում:
- Դիլիջանի Օրհուս կենտրոնը այս տարի ներկայացրել է հայտ՝ Դիլիջանի քաղաքապետին կից շրջակա միջավայրի պահպանության խորհրդակցական մարմնում ներգրավվելու համար. http://www.dilijancity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=e8cdf119-3f75-4900-b94c-926983e8f59f
- Կենտրոնները նաև հետևողական իրազեկման աշխատանքներ են տարել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» կառավարության որոշման նախագծի վերաբերյալ, համայնքներում (Արարատի մարզի համայնքներում, Ալավերդում և Գավառում) ՏԻՄ-երի ու համայնքի ակտիվի համար սեմինարների անցկացման ժամանակ տեղեկացրել են կառավարության կողմից նախագիծը հաստատելու մասին և հատկապես, թե ինչ նոր ֆինանսական մեխանիզմներ են առաջարկվում համայնքային մակարդակում էկոլոգիական խնդիրները լուծելու համար: Բացի վերոհիշյալ հանդիպումներից, այս մասին տեղեկատվություն է տարածվել նաև սոցիալական և էլեկտրոնային փոստի մարզային ցանցերով: Հանրային քննարկումների ժամանակ պաշտպանվել են նախագծի հատկապես այն դրույթները, որոնք վերաբերում են ֆինանսական նոր մեխանիզմի ներդրմանը ու անհրաժեշտ գումարների

գոյացման ու հավաքագրման ձևերին, այդ առումով իր դիրքորոշումը վերանայելու և նախագծի վերոնշյալ դրույթներին հավանություն տալու առաջարկ են ներկայացրել Ֆինանսների նախարարությանը, որից հետո, սեպտեմբերի 10-ին կառավարությունը որոշում է կայացրել նախագիծը հաստատելու մասին:

2.Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների.

Ծրագրի առաջադրանքները

Գործունեություն 1.1: Օրհուս կենտրոնները Հայաստանում շարունակելու են բարձրացնել իրազեկությունը և արձագանքել բնապահպանական մարտահրավերներին եւ սպառնալիքներին՝ տրամադրելով հանրությանը լայնածավալ բնապահպանական տեղեկատվություն. Օրհուս կենտրոնները պետք է ապահովեն քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը բնապահպանական կառավարման եւ որոշումների կայացման գործընթացներում, առաջարկեն արդյունավետ համագործակցության հարթակ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջեւ. Մանրամասն նկարագրությունը տրամադրված է Տեխնիկական հանձնարարականում և հավելված 1-ում (բյուջե):

Գործողություն 1.1.1 Օրհուս կենտրոնները պետք է հավաքեն եւ տարածեն բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ կապված տեղեկատվություն՝ աղտոտված ջրի և քաղաքային միջավայրի օդի վերաբերյալ, հանքարդյունաբերական վայրերին մոտ և այլ բնապահպանական խնդիրներ. պետք է բարձրացնեն հանրային մասնակցության արդյունավետությունը, զարգացնեն բաց վարչական մշակույթ որն աջակցելու է հասարակության մասնակցությունը եւ թափանցիկությունը բնապահպանական հարցերում, գնահատեն դրանք որպես դրական ներդրում ժողովրդավարական, արդյունավետ և լավ կառավարման համար:

Ենթագործողություն 1/1

Հավաքագրել տեղեկատվություն կապված բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ, որոնք առաջացնում են քաղաքային միջավայրում աղտոտված ջրից և օդից, հանքարդյունաբերական օբյեկտների մոտ և այլ բնապահպանական թեժ կետերում

1/1.1 Կատարված քայլեր

Կենտրոնները շուրջ 99 հարցում են ուղղել պատկան մարմիններին, հավաքագրել տեղեկատվություն շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող կամ շրջակա միջավայրում պլանավորվող գործողությունների հնարավոր ազդեցության վերաբերյալ, պարզեցրել դրանք, վերլուծել փորձագետների օգնությամբ, տրամադրել ԶԼՄ-ներին ու տարածել կենտրոնների ինտերնետային կայքի, սոցցանցերի ու էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով:

Հարցումների մեծ մասն ուղղված են եղել Բնապահպանության, Առողջապահության ու Էներգետիկայի և բնական պաշարների, Գուղատնտեսութան, Տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարություններին, տարածքային կառավարման մարմիններին ու ՏԻՄ-երին, Հանրային ծառայություններ մատուցող տարբեր կազմակերպությունների.

1. Կապանի Օրհուս կենտրոնի համակարգող քաղաքապետին նամակ է ուղղել քաղաքի կենտրոնում գտնվող հանքուղուց անձրևոտ օրերին դեղնաշականագույն ծանր մետաղներով աղտոտված գրունտային ջրերի հոսքի վերաբերյալ,
2. Գավառի Օրհուս կենտրոնի ԲՆ ուղղված նամակներից մեկը Սևանա լճի ջրածածկ տարածքներից ծառարմատներն ու բույսերը հեռացնող թանկարժեք սարքի աշխատանքի մասին է եղել,
3. Ալավերդու Օրհուս կենտրոնը բազմաթիվ հարցումներ է արել պատկան մարմիններին և մասնավոր ընկերությանը՝ Աղթալայի Նահատակ պոչամբարի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն հավաքագրելու նպատակով,
4. Դիլիջանի խմելու ջրի որակի վերաբերյալ Դիլիջանի Օրհուս կենտրոնի նամակն ուղղված է եղել պատկան մարմիններին ու ջուր մատակարարող ընկերությանը,
5. Ապարանի կենտրոնը Ապարանի ջրամբարում ձկների անկման հետ կապված տեղեկացրել է Մարզի բնապահպանության վարչությունը և տեսչությունը, հարցումներ ուղղել համապատասխան մարմիններին, կազմակերպել այց տեղում պարզելու, թե ձկների զանգվածային անկման մասին ահազանգը համապատասխանում է իրականությանը, թե ոչ, ինչպես նաև անկախ փորձագետի աջակցությամբ կատարվել է ջրի լաբորատոր հետազոտություն:

Որոշ հարցումներ ուղղված են եղել Վարչապետին, Բնապահպանության, Առողջապահության, Էներգետիկայի և բնական պաշարների, Տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարություններին, տարածքային կառավարման մարմիններին ու ՏԻՄ-երին, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների (Հայջրմուղկոյուղի, ՀԿԾՀ): Մասնավորապես.

6. Ալավերդու Օրհուս կենտրոնը նամակներ է հղել այն համայնքների ղեկավարներին, որոնց տարածքում «Թեղուտ» ՓԲԸ-ն նախատեսում է պղնձի և մոլիբդենի որոնողական աշխատանքներ իրականացրել՝ տեղեկանալու համար, թե համայնքները տվել են արդյոք իրենց գրավոր համաձայնությունը որոնողական աշխատանքների իրականացման համար:
7. Գավառի Օրհուս կենտրոնը հարցում է արել ԲՆ և Սևան ԱՊ-ին Սևանա լճի վրա ցանցավանդակային տնտեսությամբ ձկների աջեցման ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև պիլոտային այդ նախագծի ժամկետների վերաբերյալ՝ պահանջելով մոնիթորինգային տվյալները, որոնք պետք է հրիմք հանդիսանան նաև ցանցավանդակային տնտեսությունը լճում ընդլայնելու համար: Չնայած նախաձեռնող ընկերության հավաստիացումներին, որ այդ տվյալները կան և տրամադրվել են հանրությանը, դրանք դեռևս չի հաջողվել ձեռքբերել:
8. Արարատի Օրհուս կենտրոնը Ազատաշեն, Արբաթ եւ Խաչփառ գյուղերի բնակիչների խնդրանքով բարձրացրել է դրանց տարածքում տիրող մշտական գարշահոտության խնդիրը՝ խնդրելով Բնապահպանության նախարարությանը տեսչականը ստուգումներ անցկացնել, պարզել ու լուծում տալ խնդրին, սակայն պատասխան է ստացվել, որ վարչապետը չի թույլատրել տեսչական ստուգումները կառավարության համապատասխան որոշման համաձայն:
9. Կապանի Օրհուս կենտրոնը համատեղ ուսումնասիրության ու կենտրոնում կազմակերպված քննարկման արդյունքում, մասնակիցների խնդրանքով նամակ է հղել ՀՀ ԲՆ, ԳՆ և գլխավոր դատախազին ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի «Շիկահող» արգելոցում, «Արևիկ» ԱՊ-ում և Կապանի անտառտնտեսության տարածքներում կատարված ապօրինի ծառահատումների մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պահանջով:
10. Գավառի Օրհուս կենտրոնը ձկան որսի արգելքի ժամանակաշրջանում մոնիտորինգ է իրականացրել, ֆիքսել ձկան վաճառքի բազում դեպքեր և դրանք, նամակի հետ միասին ուղղել ԲՆ-ին:
11. Ապարանի կենտրոնը Մելիքգյուղի Թուխմանուկի ոսկու հանքավայրում ընկերության կողմից իրականացվող ապօրինի շինարարական աշխատանքների մասին տեղեկացրել է Մարզի բնապահպանության վարչությանը և տեսչությանը, հարցումներ ուղղել համապատասխան մարմիններին, ստացված տեղեկատվություն տրամադրել բնակչությանը:

12. Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը հարցում է արել ՀՀ ԲՆ ԲՊՏ Վայոց ձորի ՏԲ, ՀՀ Ոստիկանության Եղեգնաձորի բաժին և Հերմոն համայնքի ղեկավարին՝ հոկտեմբերի 17-ին ԷկոԼուրի տեսախցիկի ֆիկսած հարյուրավոր հատված ծառերի օրինականությունը և հատված ծառերի Եղեգիս գետի պաշտպանիչ գոտում գտնվելու հանգամանքը պարզելու նպատակով:
13. Հարցում ՀՀ ԱՆ "Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման Ազգային կենտրոն" ՊՈԱԿ-ին ՀՀ Սյունիքի մարզի Սյունիք համայնքի տարածքում Կապանի քաղաքային կոյուղատարից արտահոսքի վերաբերյալ: Կոյուղատարից արտահոսքի վերաբերյալ Կապանի ՕԿ համակարգողի կողմից հարցազրուց է տրվել, տեղեկատվությունը “ՍՈՍԻ” հեռուստաընկերությամբ տարածվել է, ներկայացվել է խնդիրը, վտանգները:
14. Երևանի Օրհուս կենտրոնն, անդրադառնալով Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանության խնդիրներին, միաժամանակ արձագանքելով Երևան քաղաքի բնակիչների բողոքին՝ կապված քաղաքում ընթացող ծառերի խորը էտի հետ, կազմակերպել է մասնագիտական հանդիպումներ ոլորտի մասնագետների հետ և վերջիններիս հետ խորհրդակցելով, էտումների գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ստացման հարցում և դիմում-առաջարկ է ներկայացրել Երևանի քաղաքապետին:

1/1.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Կապանի քաղաքի կենտրոնում գտնվող հանքուղուց անձրևոտ օրերին դեղնաշականագույն ծանր մետաղներով աղտոտված գրունտային ջրերի հոսքի վերաբերյալ քաղաքապետին ուղղված նամակի արդյունքում ստեղծվել է աշխատանքային խումբ՝ կազմված ՀԿ-ների ներկայացուցիչներից, քաղաքապետարանի պատասխանատուներից, Օրհուս կենտրոնի համակարգողից ու բնակիչներից: Կարճ ժամանակ հետո հանքուղում կառուցվել է փոքրիկ նստվածքային ավազան և այդ ջրերը միացվել են կոյուղատարին http://aarhus.am/?page_id=8861&lang=en

2. ԲՆ-ն հրավիրել է Գավառի Օրհուս կենտրոնի ներկայացուցիչներին՝ մասնակցելու մաքրման աշխատանքների մոնիտորինգի գործընթացին՝ շրջայցի միջոցով, տեղեկատվությունը կրկին հասանելի է եղել շահագրգիռ հանրության համար http://aarhus.am/?page_id=10409&lang=en :

3. Կենտրոնը ամբողջական տեղեկատվություն է հավաքագրել Ախթալա ԼՀԿ գործունեության, նոր պոչամբարի նախագծի և Նահատակ պոչամբարի վերաբերյալ, ինչը շահագրգիռ կողմերին, այդ թվում Մեծ Այրումում ձևավորված քաղաքացիական խմբին հնարավորություն է տվել ունենալ իրավիճակի ու հնարավոր ռիսկերի իրական պատկերը:

4. Դիլիջանի խմելու ջուր մատակարարող ընկերությունը ուշադրության կենտրոնում է պահել քաղաքի ջրամատակարարման խնդիրն ու մեծացրել ջրի որակի վերահսկողությունը http://aarhus.am/?page_id=9231 :

5. Արդյունքում ՝ Մարզի բնապահպանության վարչության և տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ Ապարանի ջրամբարում. http://aarhus.am/?page_id=10244

6. Ծաղկաշատ համայնքի հանրությունը կենտրոնի միջոցով տեղեկացել է, որ համայնքապետն առանց իրենց համաձայնության դրական պատասխան է տվել, ինչից հետո ընդվզել են, դիմել ՀՀ նախագահին ու վարչապետին Ծաղկաշատ-Ախետք հանքային դաշտի ընդերքի ուսումնասիրության աշխատանքները կասեցնելու համար: Թեղուտ ՓԲԸ-ն տեղեկացրել է այդ աշխատանքները կասեցնելու մասին: Ալավերդու կենտրոնի գործողությունների մասին տեղեկատվության անգլերենը տարբերակը հետևյալ հղումով՝ http://aarhus.am/?page_id=12962&lang=en :

7. Կենտրոնը ստիպել է պատկան մարմնին հավաքագրել անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ:

8. Լրատվամիջոցներն անդրադարձել են http://armtimes.com/hy/read/73199 խնդրին՝ կրկին շեշտադրվելով տեսչական ստուգումների մասին կառավարության որոշման մարդու իրավունքներին հակասության մասին:

9. ՀՀ Բնապահպանության նախարարը պատասխանել է, որ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվում է ստուգումներ, ավարտելուց հետո գրավոր կտեղեկացվի արդյունքների մասին, իսկ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Կապանի անտառտնտեսությունից հայտնել են որ հարուցված է քրեական գործ, հետաքննությունը շարունակվում է, ավարտելուց հետո արդյունքների մասին կտեղեկացվի:

10. Կենտրոնը նպաստել է ձկան որսի վերահսկողության խստացմանը, չնաած որ ՀՀ բնապ. Նախարարի պատասխանը համարա ամբողջութամբ կրկնում էր հարցումը:

11. Հարցումների միջոցով հավաքագրված տեղեկատվությունը Մելիքգյուղի Թուխմանուկի ոսկու հանքավայրի մասին տրամադրել է բնակչությանը http://aarhus.am/?page_id=10521 :

12. Ստացվել է պատասխան տարածքը սեփական լինելու մասին, և որ ծառերը տնկվել են 12 տարի առաջ՝ կտրվելու նպատակով: Ոստիկանությունը կենտրոնի նամակի հիման վրա պետք է պարզի գործողության օրինականությունը:

13. Սյունիքի փոխմարզպետի գլխավորությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, տեղում ուսումնասիրվել և Օրհուս կենտրոնում քննարկվել հարցը: Խնդիրը կայանում է նրանում, որ կոյուղատարը խցանվել է, դիտահորից անցք է փորվել և ամբողջ կոյուղաջրերը լցվում է ձորակ և 200-300մ բաց տարածությամբ հոսելով լցվում է գետ: Փոխմարզպետը խնդիրը բարձրացրել է "Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ-ի ղեկավարության առջև, և հարցի լուծումը ընթացքի մեջ է:

14. Չնայած ծառերի խորը էտի հետ կապված մասնագիտական եզրակացությունների ու այլընտրանքային եղանակների ներկայացմանը Երևանի քաղաքապետարան, խնդրի կապակցությամբ դեռևս արդյունք չի գրանցվել, սակայն Երևանի կենտրոնը հետևողական աշխատանքներ է տանում այդ ուղղությամբ:

Բոլոր հարցումներն ու պատասխաններն ըստ ամսաթվերի և ըստ կենտրոնների, հայերեն տարբերակով կարելի է տեսնել հետևյալ հղումով http://aarhus.am/?page_id=132,

✓ Կենտրոնների միջոցով քաղաքացիական հանրության բարձրացրած հարցերը մասնակիորեն պարզաբանվել են Կենտրոնների կողմից արված հարցումների հիման վրա, ինչպես նաև վերլուծվել են փորձագետների կողմից և կայքի «Փորձագետի անկյուն» բաժնում տեղադրվել է 20_ից ավելի վերլուծություն, կարծիք կամ առաջարկ: Դրանք օգտագործվել են ԶԼՄ-ների կողմից համապատասխան լուսաբանումների ժամանակ:

✓ Կենտրոնների կայքում հրապարակվել են անկախ փորձագետների կարծիքներ ու վերլուծություններ շրջակա միջավայրին առնչվող տարաբնույթ հարցերի վերաբերյալ՝ օդային ավազանի ու ջրերի աղտոտման, անտառային հրդեհների, հանքաարդյունաբերության, բնական աղետների, ոլոտի օրենսդրության վերաբերյալ, ցորենի ալուրի ֆոլաթթվով և երկաթով հարստացնելու ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնության և ՀՀ համապատասխան օրենքի նախագծի վերաբերյալ, բնապահպանական թաքնագիտության և Գեորգի Գյուրջինի ուսմունքի, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ:

Ենթագործողություն 1/2

Առաջարկել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ

1/2.1 Կատարված քայլեր

Ճանապարհային քարտեզի 7.1 կետին համահունչ 11 միջոցառում է իրականացվել՝ նպաստելու շրջակա միջավայրի պահպանության գործին քաղաքացիների առավել ակտիվ ներգրավմանը, աջակցելու որոշումների կայացման գործընթացին նրանց մասնակցությանը՝ առաջարկելով պետական կառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ: Այս առումով օրինակելի է .

1. Գյումրիի փորձը, «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների» կենտրոնի կողմից անցյալ երկու տարիների ընթացքում քաղաքում անցկացված հողի, ջրի և օդի հետազոտությունների արդյունքների մանրամասն ներկայացում և քննարկում, որի նախաձեռնողը Գյումրու կենրոնն է եղել դեռ 2013-ից:
http://www.asparez.am/news-hy/canr_metaxner_gyumrium-hy/, http://hetq.am/arm/news/60427/gyumrii-mankapartezneric-meki-taratsqum-hoxi-mej-kapari-qanaky-22-angam-gerazancum-e-tuylatreli-normy.html

2. Գավառի փորձը, երբ քաղաքի առավել ակտիվ երիտասարդների հետ հանդիպում կազմակերպվեց, շրջակա միջավայրի պահպանության գործին քաղաքացիների առավել ակտիվ ներգրավմանը նպաստելու օրինակներ ներկայացվեց, փորձի փոխանակում տեղի ունեցավ հարևան քաղաքի և մարզի երիտասարդների միջև:

Գյումրու ՕԿ

Գավառի ՕԿ

3. Գյումրու Օրհուս կենտրոնը «Կանաչ արահետ» ՀԿ հետ համատեղ իրականացրել է կլոր սեղան-քննարկում «Հիմնախնդիրները ՀՀ Շիրակի մարզի գյուղական համայնքներում և դրանց լուծման հնարավորությունները» թեմայով:

4. Գավառի Օրհուս կենտրոնի փորձագետների խորհուրդը դիմել է Գեղարքունիքի մարզպետին՝ շրջակա միջավայրի բաղադրիչ պարունակող մարզում իրականացվող ծրագրերը Օրհուս կենտրոնում քննարկելու խնդրանքով (http://aarhus.am/images/Gavar/009-20.07.2015-%20Grutyun%20Gexaequniqi%20marzpetin%20(1).pdf):

5. Կապանի քաղաքապետարանում ՀԿ-ների և քաղաքացիների ներգրավմամբ տեղի ունեցած քննարկման արդունքում, Կապանի Օրհուս կենտրոնի աջակցութամբ Կապանի քաղաքապետին նամակ է ուղղվել անձրևոտ օրերին քաղաքի կենտրոնում բնակելի թաղամասի հարակից սարալանջից, որտեղ նախկինում լցված էր հանքի դատարկ ապարները, հեղեղատի տեսքով շենքի բակ լցվող հոսքի, չորանալուց հետո քամիներից և մեքենաներից հոսքից մթնոլորտային օդի աղտոտման մասին, որտեղ երեխաները խաղալում են, ինչը վտանգում է իրենց առողջությունը:

6. Ալավերդի և Հրազդան Օրհուս կենտրոնների փորձը, որոնց աջակցութամբ ստեղծվել են «Երիտասարդ Ալավերդի» և «Առողջ միջավար» ՀԿ-ը, որոնք սկսել են ակտիվ գործունեություն ծավալել Ալավերդի և Հրազդան քաղաքներում:

7. Դիլիջանի ՕԿ-ում տեղի են ունեցել Դիլիջան քաղաքի գենպլանի և գոտիավորման զոնաների, եկեղեցու նախագծի վերաբերյալ քննարկումներ:

8. Եղեգնաձորի, Կապանի և Վանաձորի ՕԿ-ներն աջակցել են հանրությանը ներկայացնել և քննարկել Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (EITI) Հայաստանի միանալու գործընթացը, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության դերը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում, դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա և հնարավոր ուղիները, որոնցով քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի, կրթական և ակադեմիական հաստատությունների ներուժը կարող է ներգրավվել և օժանդակել նախաձեռնությանը Հայաստանում: Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (EITI) կառավարությունների, ընկերությունների և քաղաքացիական հասարակության համաշխարհային կոալիցիա է, որոնց համատեղ աշխատանքն ուղղված է բնական պաշարներից ստացվող եկամուտների բաց և հաշվետու կառավարման բարելավմանը:

1/2.2 Ձեռք բերված արդյունքներ

Թե ՏԻՄ ներկայացուցիչները, թե քաղաքացիական հասարակությունը, հատկապես երիտասարդները իրազեկ են շրջակա միջավայրի առնչությամբ հարցերի լուծման գործում ՏԻՄ-ՔՀԿ համագործակցության կարևորության, արդյունավետ միջոցների ու միջազգային նման փորձի մասին:

1. Գյումրու հանրությանը և ոլորտի պատասխանատուները ձեռք են բերել ամբողջական տեղեկատվություն իրականացված հետազոտությունների վերաբերյալ և առաջարկվել է գտնել

համապատասխան ֆինանսավորում և իրականացնել քաղաքի ֆունկցիոնալ կանաչապատման նախագծի կազմում:

2. Գավառի երիտասարդները տեղում որոշեցին նախաձեռնել մի ծրագիր, որը կաջակցի էկոտուրիզմի զարգացմանը քաղաքում:

3. Բարձրաձայնվել են ՀՀ Շիրակի մարզի գյուղական համայնքներում առկահիմնախնդիրները, քննարկել այլընտրանքային զարգացման հնարավորություններն ու տարածել առկա դրական փորձը:

4. Գեղարքունիքի մարզպետը դրական պատասխանել է տվել Գավառի փորձագետների խորհրդի խնդրանքին:

5. Կապանի փոխքաղաքապետը, քաղաքաշինության բաժնի պետը այցելել են տվալ թաղամաս, տեղում խնդրի լուծման ուղիներ փնտրելու: Արդունքում Կայացվեց որոշում՝ կառուցել մոտ 50մ հեղեղատար և միացնել գոյություն ունեցող հեղեղատարին:

6. Նոր գաղափարակիցների, համախոհների և համագործակից կառուցների ձեռքբերում

7. Թե ՏԻՄ ներկայացուցիչները, թե քաղաքացիական հասարակությունը, հատկապես երիտասարդները իրազեկ են շրջակա միջավայրի առնչությամբ հարցերի լուծման գործում ՏԻՄ-ՔՀԿ համագործակցության կարևորության, արդյունավետ միջոցների ու միջազգային նման փորձի մասին:

8. Կենտրոնները նպաստել են մարզային ՔՀԿ_ների և ՀՀ կառավարության աշխատակազմիու Համաշխարհային բանկի միջև համագործակցության ձևավորմանը Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության շրջանակում, ինչպես նաև այս գործընթացի մասին քաղաքացիական հասարակության շրջանում իրազեկության մակարդակի բարձրացմանը:

Ենթագործողություն 1/3

Հարթակ տրամադրել՝ ապահովելու համար հասարակության մասնակցությունը հանրային լսումների, սեմինարների, բանակցությունների և միջնորդությունների

1/3.1 Կատարված քայլեր

Կենտրոնները Ճանապարհային քարտեզի 8.2. կետին համապատասխան աջակցել են այլ կազմարեպությունների այն նախաձեռնություններին, որոնք վերաբերել են հասարակական գործունեությանը մասնակցելու և ներգրավվելու մեթոդներին: Ճանապարհային քարտեզի ***5.1*** կետին համապատասխան կենտրոններն աջակցել են 23 հանրային լսումների կազմակերպմանը,

կամ մասնակցել դրանց: Աջակցել են հանրային լսումների կազմակերպմանը՝ դրանց տեղի ունենալու օրվա և ժամի մասին իրազեկելով հանրությանը կենտրոնների կայքի, էլ. հասցեների, սոց. ցանցերի միջոցով:

1. Մի քանի դեպքերում հասարակական լսումները կազմակերպվել են հենց Օրհուս կենտրոնում (Դիլիջան, Կապան, Հրազդան, Ալավերդի ՕԿ-ներ):

Համակարգողները մասնակցել են նաև տարբեր թեմաներով հանրային լսումների, որտեղ ներկայացրել են հանրության տեսակետն ու առաջարկությունները, կամ լսումներից հետո ստացված տեղեկատվությունը ներկայացրել շահագրգիռ հանրությանը (http://aarhus.am/?page_id=11553), http://aarhus.am/?page_id=7207&lang=en,http://aarhus.am/?page_id=8651&lang=enhttp://aarhus.am/?page_id=9909&lang=en, http://aarhus.am/?page_id=10380&lang=enhttp://aarhus.am/?page_id=8946&lang=en, http://aarhus.am/?page_id=8756):

Կապանի ՕԿ

Դիլիջանի ՕԿ

2. Վորլդ Վիժընն Ամասիա կազմակերպության հետ համագործակցությամբ Գյումրի ՕԿ-ը Ամասիայի տարածաշրջանի համայնքների երիտասարդական խմբերի համար կազմակերպել է «Ծրագրային առաջարկ գրելու և միջոցների հայթայթման կարողությունների զարգացում» թեմայով դասընթաց:

3. Տեղի է ունեցել հանդիպում Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության ներկայացուցիչների հետ՝ քննարկելու «Եղվարդի ջրամբարի Տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ» ծրագիրը, ներկայացնելու

ներկայումս իրականացվող հետազոտական աշխատանքները և ծանոթացնել արդյունքներին, ինչպես նաև ծրագրի հետագա քայլերին և քննարկել համագործակցության հարցերը: Քննարկումների արդյունքում կենտրոնն աջակցել է Եղվարդ և Երզնկա համայնքներում հասարակական իրազեկման միջոցառումների կազմակերպմանը:

4. Ապարանի ՕԿ-ում պարբերաբար իրականացվում են աշխատանքային հանդիպումներ տարբեր ՀԿ-րի հետ՝ քննարկելու Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներն ու ոսկու հանքավայրի ազդեցության գոտում գտնվող եզդիական Միրաք, Ռյա Թազա, Ալագյազ համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչների և բնակչության՝ հանքավայրի բացասական հետևանքների իրազեկման ու լուսաբանման միջոցառումների անցկացման, որոշումների ընդունման գործընթացին մասնակցության աջակցությանը վերաբերող հարցերը.

5. Ալավերդու ՕԿ-ն համայնքի երիտասարդների համար կազմակերպել և անցկացրել է սեմինար՝«Հասարակության մասնակցությունը համայնքի համար կարեւարագույն որոշումների կայացման նախնական փուլից» թեմայով:



6. Սեպտեմբերի 9-ին Արագածոտնի մարզի Մելիքգյուղի գյուղապետարանում տեղի ունեցան «ՄԵԳՈ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման համալիրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինման, պոչամբարի պաշտպանիչ պատնեշի և պոչանքների ժամանակավոր չոր պահեստարանի» նախագծի նախնական գնահատման հայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկումներ, որին մասնակցել է նաև Ապարանի ՕԿ համակարգողը

7. Գավառի ՕԿ-ն աջակցել և մասնակցել է Կարճաղբյուրում տեղի ունեցած ձկան վերամշակման գործարանի և Սևանի իշխանի աճեցման մոդելային ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի վերաբերյալ հանրային լսումներին

8. Դիլիջանի ՕԿ-ն աջակցել է Դիլիջանի քաղաքի «Պարզ լիճ» 35/6 ՀՎ ենթակայանի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետության հասարակական լսմանը, որը տեղի է ունեցել հենց կենտրոնում:



9. Հրազդանի Օրհուս կենտրոնում «ԱԶԲ-2. ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել ավ հանրային քննարկում. http://aarhus.am/?page_id=9362

10. Դիլիջանի ՕԿ-ն աջակցել է «Ֆիոլետովո» ՕԳ-ի միջազգային դպրոցի տարածքից տեղափոխման նախագծի նախնական գնահատման հայտի շրջակա միջավայրի վրա ազդեցության հասարակական լսումների կազմակերպմանը

11. Եղվարդի ՕԿ-ն աջակցել է Եղվարդի և Նոր Երզնկա համանքներում «Եղվարդի ոռոգման համակարգի բարելավման նախագծի շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտ» փաստաթղթի վերաբերյալ առաջին հանրային լսման կազմակերպմանը, որին մասնակցել են նախագծի թիրախային համայնքներից ներկայացուցիչներ, այդ թվում՝ Եղվարդից, Նոր Երզնկայից, Նաիրիի տարածաշրջանի մի շարք համայնքներից, Արագածոտնի և Արմավիրի մարզերից բնակիչներ, ՋՕԸ ներկայացուցիչներ, համայնքապետեր, համայնքապետարանի ներկայացուցիչներ, ինչպես նաև ներկայացուցիչներ ՀՀ ԳՆ Ջրային Տնտեսության Պետական կոմիտեից (ՋՏՊԿ), Եղվարդի Օրհուս կենտրոն 8 Ճապոնիայի Միջազգային Համագործակցության գործակալությունից (ՃՄՀԳ), նախագծի ՇՄԱԳ-ն իրականացնող «էՅ ԹԻ էՄ էՍ Սոլյուշնս» ՍՊԸ-ից:

գ. Եղվարդ գ. Նոր Երզնկա

12. Երևանի Օրհուս կենտրոնում պարբերաբար կազմակերպվել են աշխատանքային հանդիպումներ նախատեսվող գործունեությունների ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ՝ համապատասխան ոլորտի փորձագետների ներգրավմամբ:

13. Երևանի Օրհուս կենտրոնում տեղի է ունեցել «ԿԿԹ կառավարման հիմնախնդիրները և լուծման հնարավոր ուղիները» թեմայով հանրային քննարկում և քննարկվել է Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտի«Ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը, երկարաժամկետ ներդրումային պլան» նախագիծը: Այս փաստաթուղթը մշակվել է Տարածքային կառավարման նախարարության կողմից:

14. Հրազդանի կենտրոնի համակարգողները, փորձագիտական խումբը կազմակերպել են այցեր, հանդիպումներ Կապուտան համայնքի գյուղապետի, բնակիչների հետ և ներկայացրել Կոտայքի մարզի Աբովյանի (Կապուտանի) երկաթի հանքավայրի շահագործման հնարավոր վտանգները և բնակիչների իրավունքը՝ մասնակցելու և ազդելու վերջնական որոշման վրա: http://aarhus.am/?page_id=10041

1/3.2 Հեռաբերվածարդյունքներ

1. Մի շարք համայնքների բնակիչներ տեղեկացվել են շրջակա միջավայրում նախատեսվող գործողությունների մասին, հանրային լսումների տեղի ունենալու մասին, Օրհուս կենտրոնի միջոցով ներկայացրել են առաջարկություններ պատկան մարմիններին:

- ✓ Կապանի «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» ծրագրում, ներառվել են Օրհուս կենտրոնի հավաքագրած քաղաքացիների առաջարկները: Հանրության խնդրանքով Կապանի Օրհուս կենտրոնի հետևողական աշխատանքի շնորհիվ,
- ✓ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն պարտավորվել է վերացնել կոյուղաջրի արտահոսքը դեպի գյուղատնտեսական հանդակներ, խնդրի լուծմանն են միացել անհատ ձեռներեցներ:

- ✓ Ստեփանավանի Օրհուս կենտրոնն աջակցել է Ստեփանավանի Մայակովսկի թաղամասի բնակիչներին համապատասխան ատյաններին բարձրաձայնելու շրջակա միջավայրի աղտոտված վիճակի մասին իրենց խնդիրը, հարցի լուծմանն ընթացք է տրվել և այլն:

2. Գյուղաբնակ երիտասարդներին ծանոթացել են ծրագիր-առաջարկ գրելու և միջոցների հայթայթման հիմնական սկզբունքներին և նրանց շրջանում ձևավորել համապատասխան հմտություններ

3. Այսուհետ Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության ներկայացուցիչները կհամագործակցեն Եղվարդի ՕԿ-ի հետ ջրամբարի կառուցման ծրագրի հետ կապված բոլոր հարցերում, հատկապես ՇՄԱԳ-ի իրականացման փուլում: Որոշվեց մոտակա ժամանակում հանդիպում կազմակերպել ՃՄՀԳ Եղվարդի ջրամբարի կառուցման ծրագրի ինժիներների և ոլորտի մասնագետների մասնակցությամբ՝ նախագծի մանրամասն, մասնագիտական ներկայացման և քննարկման համար

4. Ապարանի ՕԿ-ի և ՀԿ-րի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն շարունակել աշխատանքներ տանել Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներն ու ոսկու հանքավայրի ազդեցության գոտում գտնվող եզդիական Միրաք, Ռյա Թազա, Ալագյազ համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչների և բնակչության հետ՝ հանքավայրի բացասական հետևանքների մասին իրազեկման ու լուսաբանման միջոցառումների անցկացման հետ կապված:

5. Ալավերդու Օրհուս կենտրոնը նպաստել է, որ երիտասարդները տեղյակ լինեն, թե ինչպես կարող են շրջակա միջավայրում պլանավորվող գործողություններին իրազեկ լինել վաղ փուլից, ինչպես մասնակցել ու որոշիչ դեր ունենալ որոշման կայացման գործում: Տեղեկացված լինելը ոգևորել է երիտասարդներին և նրանք իրենք են հանդես եկել առաջարկություններով, իրականացրել հետազոտություններ ու արդյունքները ներկայացրել իրենց ընկերներին:

6. Ապարանի ՕԿ-ի աջակցության արդյունքում բնակիչները պատրաստել են նամակ ուղղված Բնապահպանության նախարարին: Նամակում բնակիչները պատմել են ընկերության կատարած խախտումների, ստանձնած ու չկատարած պարտավորությունների, գյուղին հասցված վնասների մասին, ներկայացրել են խնդիրներ, որոնք հանքի, հարստացուցիչ ֆաբրիկայի և պոչամբարների շահագործման արդյունքն են (http://aarhus.am/images/Aparan/Namak_meliq%20bnakichner_18_09.pdf):

7. Արդյունքում նախաձեռնողները տեղեկացրեցին, որ Գավառի ՕԿ-ի ներկայացրած բոլոր առաջարկությունները հաշվի են առնվել, կազմելու են մոնիտորինգային հանձնաժողով և Սևանա լճում ցանցավանդակների տեղադրումը մոնիտորինգային հանձնաժողովի որոշումից է կախված:

8. Մի շարք համայնքների բնակիչներ տեղեկացվել են շրջակա միջավայրում նախատեսվող գործողությունների մասին, հանրային լսումների տեղի ունենալու մասին, հնարավորություն են ունեցել ներկայացնելու իրենց դիտողություններն ու անհամաձայնությունները, Օրհուս կենտրոնի միջոցով ներկայացրել են առաջարկություններ պատկան մարմիններին:

9. “ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագրի շրջանակներում տեղի ունեցած հանրային քննարկումից հետո հանրությունը ներկայացրեց ջրամատակարարման խնդիրները՝ պահանջելով վերանայել ջրամատակարարման գրաֆիկը, որի արդյունքում քաղաքում ջրամատակարարման խնդիրը կարգավորվեց:

10. Համայնքի բնակիչներ տեղեկացվել են ծրագրով նախատեսված շրջակա միջավայրում նախատեսվող գործողությունների մասին հենց նախնական փուլից, հանրային լսումների տեղի ունենալու մասին, Օրհուս կենտրոնի միջոցով ներկայացրել են առաջարկություններ պատկան մարմիններին:

11. Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալության, ՀՀ ԳՆ Ջրային Տնտեսության Պետական կոմիտեի, Եղվարդի քաղաքապետարանի, նախագծի ՇՄԱԳ-ն իրականացնող «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ –ի ներկայացուցիչները ակտիվորեն համագործակցում են Եղվարդի ՕԿ-ի հետ ջրամբարի կառուցման ծրագրի հետ կապված բոլոր հարցերում, հատկապես ՇՄԱԳ-ի իրականացման փուլում, համատեղ իրականացնելով երկու հասարակական լսում և երկու իրազեկման սեմինարներ Եղվարդ և Նոր Երզնկա համայնքներում: http://aarhus.am/?page_id=13295, http://aarhus.am/?page_id=12841, http://aarhus.am/?page_id=12578 , http://aarhus.am/?page_id=11444

12. Բացահայտվել են նախագծերի ռիսկերն ըստ ոլորտների՝ ջրային ռեսուրսներ, օդի, հողերի աղտոտվածության, իրավական կողմ և այլն: Այս ամենի արդյունքում կազմակերպվել են այցելություններ համայնքներ և տեղերում բնակիչներն իրազեկվել են հնարավոր ռիսկերի մասին:

13. Քննարկման մասնակիցների կողմից հնչեցվել են մի շարք առաջարկություններ, որոնք, պատասխանատուների պնդմամբ, հաշվի կառնվեն ռազմավարական փաստաթղթի վերջնական տարբերակում:

14. Հրազդանի ՕԿ-ն մեծ ներդրում են ունեցել հասարակական լսմանը գիտակից, տեղեկացված կապուտանցիների մասնակցության առումով: Արդյունքում նրանք դեմ են դուրս եկել նախաձեռնողների դեմ և կասեցրել են իրենց համայնքում հանքի շահագործման գործընթացը: http://aarhus.am/?page_id=10982

Ենթագործողություն 1/4

Ըստ անհրաժեշտության աջակցել ՇՄԱԳ գործընթացին տեղեկատվության տարածման միջոցով՝ ստեղծելով պայմաններ ապահովելու համար հասարակության մասնակցությունը,

1/4.1 Կատարված քայլեր

Կենտրոնների համակարգողներն ու տեղեկատվության պատասխանատուն ոչ միայն էլեկտրոնային եղանակով, այլև անմիջական հանդիպումների միջոցով պարզաբանումներ են տվել մինչ հասարակական լսման տեղի ունենալը, ապա որոշ հասարակական լսումների ամբողջական տեսաձայնագրությունները զետեղել Aarhus online TV-ում: Մասնավորապես.

1. TV-ում տեղադրվել է վիճահարույց մի հարցի՝ Սևանում ցանցավանդակների միջոցով ձկնաբուծության ծրագրի հանրային լսման ձայնագրությունը, որի տեղի ունենալու մասին Գավառի Օրհուս կենտրոնը տեղեկացել է շատ ուշ և շահագրգիռ ՔՀԿ-ները հնարավորություն չեն ունեցել մասնակցելու

2. Երևանի, Եղեգնաձորի և Գավառի Օրհուս կենտրոնների համագործակցությամբ կազմակերպել են քննարկումներ Ամուլսարի ոսկու հանքի նախագծի, Սևանա լճի հարակից տարածքներում նավթի ու գազի որոնողական աշխատանքներ սկսելու, մանրակրկիտ մասնագիտական տեղեկատվություն ու վերլուծություններ են տարածել շահագրգիռ հանրությանը, աջակցել հանրության պատշաճ իրազեկմանը, որոնց ամբողջական տեսաձայնագրությունները ևս հասանելի է դարձվել հանրության համար,

http://aviplatform.com/media.details.php?mediaID=3430&page=1&&status=all,
http://aviplatform.com/media.details.php?mediaID=3405&page=1&&status=all,

3. Այս տարի ՇՄԱԳ գործընթացներն ավելի թափանցիկ դարձնելու նպատակով, ծրագրի ղեկավարի հանձնարարությամբ, յուրաքանչյուր համակարգող իր տարածաշրջանում տեղի ունեցող հասարական լսումների մասին ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական www.mnp.am կայքում տեղադրված հայտարարությունն ուղարկել է ծրագրի ղեկավարին, զուգահեռ, նույն կայքից փնտրել, գտել, չգտնելու դեպքում հարցման միջոցով ձեռքբերել և ուղարկել է նաև ՇՄԱԳ-ի նախագիծը:

Կենտրոնների համակարգողներն ու տեղեկատվության պատասխանատուն ոչ միայն էլեկտրոնային եղանակով, այլև անմիջական հանդիպումների միջոցով պարզաբանումներ են տվել մինչ հասարակական լսման տեղի ունենալը, ապա որոշ հասարակական լսումների ամբողջական տեսաձայնագրությունները զետեղել Aarhus online TV-ում: Մասնավորապես.

4. Հանրային լսումից հետո ամբողջ տեղեկատվությունը տարածվել է մարզի շահագրգիռ հանրության շրջանում:

5. Aarhus TV_ում տեղադրվել է Զկան վերամշակման գործարանի և Սևանի իշխանի աճեցման մոդելային ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի վերաբերյալ հանրային լսումների տեսագրությունը:
/http://aviplatform.com/user.items.php?type=video&page=0&categoryId=159&status=all&id=185&media_id=3414/:

6. Դիլիջանի ՕԿ ոչ միայն էլեկտրոնային եղանակով, այլև անմիջական հանդիպումների միջոցով պարզաբանումներ են տվել մինչ հասարակական լսման տեղի ունենալը, ապա որոշ հասարակական լսումներիների տեղեկատվությունը տարացել սոց ցանցերով:
https://www.facebook.com/groups/dilijangroup/

1/4.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Հանրային լսումից հետո ամբողջ տեղեկատվությունը տարածվել է մարզի շահագրգիռ հանրության շրջանում՝ http://aviplatform.com/media.details.php?mediaID=3414&page=1&&status=all:
Հավաքագրվել են առաջարկներ՝ նախագծում ներառելու համար, ամբողջական տեսքի է բերվել և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարություն
/http://aarhus.am/letters_2015/Grutyun_Gavar_22_05.pdf/:

2. Արդյունքում, երկխոսությամբ, բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ բոլոր խնդիրները հայտնվել են ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում: Ինչպես նաև քննարկման ընթացքում բարձրացված և անպատասխան մնացած հարցերի վերաբերալ պատրաստվել են ինտերվյուներ անկախ փորձագետների հետ ու տեղադրվել Aarhus TV-ում՝

http://aarhus.am/?page_id=8644

http://aviplatform.com/user.items.ph

3. Հայտարարություններն ու ՇՄԱԳ-ի նախագծերի ամբողջական փաթեթները www.aarhus.am կայքի հայտարարությունների բաժնում տեղադրվելը ավելի է հեշտացրել հանրության մասնակցությունն այդ գործընթացներին, որովհետև երբեմն, նույն www.mnp.am կայքում տեղադրվում է միայն հայտարարությունը, բայց նախագիծը տեղադրվում է լսումներից օրեր անց: Այս կերպ Օրհուս կենտրոնները օգնում են նախարարությանը ավելի ճշգրիտ և պարտաճանաչ աշխատել: http://aarhus.am/?page_id=33 :

4. Կայքի հայտարարությունների բաժնում հանրային լսումների տեղի ունենալու վերաբերյալ 58 հայտարարություն է տեղադրվել՝ կից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով, որոնց միջոցով ավելի քան 5000 մարդ տեղեկացել է հանրային լսման տեղի ունենալու մասին, հնարավորություն ունեցել նախապես ծանոթանալու նախագծին ու ՇՄԱԳ փաստաթղթին (յուրաքանչյուր հայտարարությունը միջինը դիտվել է 87 անգամ):

5. Հանրությունը վաղ փուլից իրազեկ է եղել և հնարավորություն ունեցել ներկա գտնվելու և իր առաջարկությունները ներկայացնելու:

6. Հանրությունը հնարավորություն է ունեցել սոց. ցանցերով մասնակից լինել քննարկմանը և առաջարկություններ ներկայացնել online.

Ենթագործողություն 1/5

Նպաստել Օրհուսի և մյուս բնապահպանական Կոնվենցիաների համատեղ գործողությունների իրականացմանը

1/5.1 Կատարված քայլեր

Կենտրոնները համագործակցել են այլ կազմակերպությունների հետ, որոնք գործողություններ են իրականացնում տարբեր կոնվենցիաների մասին իրազեկությունը բարձրացնելու և իրականացմանը նպաստելու ուղղությամբ:

1. Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոնի փորձագետները, ոլորտի այլ փորձագետների մասնագիտական պարզաբանումներ են տվել Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության կետի առնչությամբ, որոնք տեղեկատվության և ինտերվյուի տեսքով տարածվել են՝ իրազեկման հնարավորություն ընձեռելով հանրությանն ու շահագրգիռ կողմերին.

http://aviplatform.com/media.details.php?mediaID=3158&page=1&&status=all
http://aviplatform.com/media.details.php?mediaID=3157&page=1&&status=all
http://aarhus.am/?page_id=10769&lang=en:
http://aviplatform.com/user.items.php?type=video&page=0&categoryId=158&status=all&id=185&media_id=3430
http://aviplatform.com/user.items.php?type=video&page=0&categoryId=158&status=all&id=185&media_id=2750



2. Սերտ համագործակցություն է տարվել և տարվում Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի շրջանակում, մասնավորապես տեղական մակարդակում քաղաքացիական շրջանառու հիմնադրամների մասին հանրության իրազեկության բարձրացման և նման հիմնադրամների ձևավորման ուղղությամբ, որը կարող է էական ազդեցություն ունենալ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար, բարձրացնել հանրության իրավունքները որպես բնական ռեսուրսների սեփականատերեր և նպաստել կլիմայի փոփոխությունների մեղմմանը:

3. Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ-ի փորձագետները ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ Ապարանի, Դիլիջանի և Իջևանի Օրհուս կենտրոններում անցկացրել են դասընթացներ՝ աջակցելու համար քաղաքացիական հասարակության

կազմակերպություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ բարձրացնել Օրհուսի կոնվենցիայի երրորդ հիմնադրույթի՝ արդարադատության մատչելիության ուղղությամբ իրենց կարողությունները.

http://aarhus.am/?page_id=11908
http://aarhus.am/?page_id=11985
http://aarhus.am/?page_id=11952

Ապարանի ՕԿ

Իջևանի ՕԿ

Դիլիջանի ՕԿ

4. Շարունակվել է սերտ համագործակցությունը Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի շրջանակում, մասնավորապես տեղական մակարդակում քաղաքացիական շրջանառու հիմնադրամների մասին հանրության իրազեկության բարձրացման և նման հիմնադրամների ձևավորման ուղղությամբ, որը կարող է էական ազդեցություն ունենալ բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար, բարձրացնել հանրության իրավունքները որպես բնական ռեսուրսների սեփականատերեր և նպաստել կլիմայի փոփոխությունների մեղմմանը:

5. Օրհուս կենտրոնները սկսել են համագործակցութունը Բնապահպանական կրթական ցանցի հետ և դարձել ցանցի անդամ:

1/5.2 Չեռք բերված արդյունքներ

1. Կայքի բազմաթիվ այցելուների համար մատչելի է դարձվել Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության կետի առնչությամբ պարզաբանումները

2. Համագործակցություն է ձևավորվել նույն թեմայով ԳԷՖ և ԵՄ աջակցությամբ դրամաշնորհային ծրագիր իրականացնող «Կլոր սեղան հիմնադրամ» ՀԿ հետ, Օրհուս կենտրոնները ճանաչվել են ոչ միայն ծրագրի ինֆորմացիոն գործընկեր, այլև եզակի պլատֆորմ համայնքային մակարդակում նմանատիպ նախաձեռնությունների կյանքի կոչման համար:

3. Կայքի բազմաթիվ այցելուների համար մատչելի է դարձվել Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության կետի առնչությամբ պարզաբանումները

4. Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի շրջանակում.

- ✓ «Կլոր սեղան հիմնադրամ» ՀԿ հետ համագործակցությամբ տեղական մակարդակում կլիմայի փոփոխության հետ կապված բնապահպանական խնդիրների լուծման մեխանիզմներ են առաջարվել ՏԻՄ-երին՝ Շիրակի և Լոռու մարզերում:
- ✓ Գավառի Օրհուս կենտրոնի աջակցությամբ Գավառի քաղաքապետարանը քաղաքի լուսավորությունը կլիմայական շրջանառու հիմնադրամի միջոցով լուծելու նամակ է հղել կոնվենցիայի ազգային համակարգողին, խորհրդատվական աշխատանք է տարվել նախաձեռնությունը կյանքի կոչելու համար
- ✓ Գեղարքունիքի և Արարատի մարզերի գյուղական համայնքներում ՏԻՄ-ի հետ հանդիպումների ժամանակ ներկայացվել է վերոնշյալ ֆինանսական նոր մեխանիզմը համայնքների առջև ծառացած ջրի, հողերի դեգրադացիայի և այլ խնդիրները լուծելու ուղղությամբ, համայնքապետերն ու ավագանու անդամները մեծ հետարքրքություն են ցուցաբերել մեխանիզմի մասին առավել մանրամասն տեղեկանալու համար:

5. Ընդլայնվել է էկոկրթության ոլորտում համագրծակցության շրջանակը: Օրհուս կենտրոնները կարևորվում են որպես բնապահպանական կրթական կենտրոն, կենտրոնների կոնտակտները ներառվել են ԲԿՑ ցանկում, քարտեզագրվել՝ որպես պրակտիկ գործողությունների իրականացման վայր՝ կրթօջախների և այլ շահագրգիռ կառույցների էկոկրթական դասերի ու միջոցառումների համար (քարտեզը շուտով հասանելի կլինի օնլայն, աշխատանքային փուլում է): https://www.facebook.com/EnvironmentalEducationNetwork/info/?tab=page_info

Ենթագործողություն 1/6

Համագործակցել մասնավոր սեկտորի հետ՝ աջակցելով այն ոլորտներում, որոնք կապված են վերը նշված կոնվենցիաների իրականացման հետ:

1/6.1 Կատարված քայլեր

Անչափ կարևորելով մշտական համագործակցությունը մասնավոր սեկտորի հետ, կենտրոններն իրենց միջոցառումների մասին մշտապես իրազեկում են տվյալ տարածքի մասնավոր ընկերություններին, նպաստում նրանց ներկայացուցիչների մասնակցությանը կենտրոնի միջոցառումներին և շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային քննարկումներին, ըստ անհրաժեշտության իրենք են այցելում տվյալ ձեռնարկություն, լավ օրինակ է՝

1. Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգողի առաջարկով տեղի է ունեցել հանդիպում Ախթալայի ԼՀԿ աշխատակիցների հետ: Նախկինում, մինչև ԼՀԿ-ի ղեկավարության փոխվելը, նման դեպք չի եղել, որ ձեռնարկության ղեկավարությունը համագործակցի ՔՀԿ-ների հետ: Նոր ղեկավարների հետ Ալավերդու կենտրոնի համակարգողը սկսել է համագործակցել, և ներգրավվել ՔՀԿ-րի:

2. Ստեփանավանի կենտրոնի համակարգողի հանդիպումը Արմանիսի ոսկու հանքի ղեկավարության հետ,

3. Կապանի Օրհուս կենտրոնի աշխատանքը տեղի արդյունաբերական ձեռնարկությունների բնապահպանական բաժինների հետ և այլն:

4. Երևան. Աշխատանքային հանդիպում՝ “Critical Resource” կազմակերպության մասնագետների հետ, ներկայացվել են մետաղական հանքաարդյունաբերության հետևանքով առաջացած բնապահպանական ռիսկերը:

1/6.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Ալավերդու կենտրոնի համակարգողի ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագա ավելի սերտ փոխհամագործակցության առումով, որից հետոձեռնարկության ղեկավարությունը հաճախ է դիմել կենտրոնին՝ խորհրդատվություն տրամադրելու խնդրանքով՝ Օրհուսի Կոնվենցիայի պահանջներից ելնելով իրենց անելիքների մասին, ըստ անհրաժեշտության բնապահպանական համապատասխան միջոցառումների ձեռնարկման մասին:

2. Ստեփանավանի կենտրոնը մշտական կապի մեջ է Արմանիսի ոսկու հանքի ղեկավարության հետ, վերջիններս մշտապես հրավիրում են կենտրոնի համակարգողին իրենց կողմից ձեռնարկվող միջոցառումներին, նախապես տեղեկացնում նախատեսվող հասարակական քննարկման կամ լսումների մասին:

3. Կապանի տարածաշրջանի ձեռնարկությունների բնապահպանական բաժինների պատասխանատուները խորհրդակցում են կենտրոնի համակարգողի հետ համապատասխան միջոցառումների ձեռնարկման, պլանավորման գործում:

4. Տեղեկացան հանքարդյունաբերության ոլորտի ռիսկերի, մարդու և շրջակա միջավայրի վրա հանքավայրերի ադեցության փաստերի մասին, հանրության դժգոհությունների մասին: Ստացված տեղեկատվությունը հաշվի կառնվի ոլորտում տվյալ ընկերության հետագա գործունեության ռիսկերի նվազեցման համար:

Գործողություն 1.1.2 Օրհուս կենտրոնները կազմակերպելու են դասընթացներ և իրազեկության բարձրացման միջոցառումներ բնապահպանական որոշում կայացնողների, ՀԿ-ների, մասնագետներին այլ շահագրգիռ կողմերի համար, բարձրացնելու են իրազեկությունը Ազգային և միջազգային օրենսդրության մասին, շարունակելու են նպաստել Օրհուսի և Էսպոյի կոնվենցիաների իրականացմանը:

Ենթագործողություն 2/1

Շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, մամլո ասուլիսներ, դասընթացներ, իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ ոլորտի պատասխանատուների, ՔՀԿ-ների, ՁԼՄ-ների, կրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ,

2/1.1 Կատարվածքայլեր

Ոլորտի մարզային և տեղական պատասխանատուների, ՀԿ-ների, ԶԼՄ-ների, այլ շահագրգիռ կողմերի իրազեկության բարձրացմանը ուղղված ծրագրով նախատեսված 15 սեմինարներից իրականացվել են 10 -ը՝ ըստ Ճանապարհային քարտեզի 2.1 և 2.2 կետերի.

1. Դիլիջանի Օրհուս կենտրոնը իրազեկման միջոցառում է իրականացրել ոլորտի մարզային և տեղական կառույցների ներկայացուցիչների համար,
2. Դիլիջանի կենտրոնը հատուկ ԶԼՄ-ների իրազեկման համար PR մենեջերի կողմից պատրաստված տեղեկատվական թերթիկը տարածել է Facebook սոցցանցի միջոցով, կազմակերպել օնլայն քննարկում,
3. Ալավերդու կենտրոնը իրազեկման միջոցառում է իրականացրել տեղական Անկյուն TV-ի լրագրողների համար,
4. Կապանի կենտրոնը կրկին PR մենեջերի կողմից պատրաստված տեղեկատվական թերթիկների ու թեմատիկ պրեզենտացիաների կիրառմամբ իրազեկման միջոցառում է իրականացրել «ՍՈՍԻ» և «ԽՈՒՍՏՈՒՓ» TV-ների, տեղական թերթի լրագրողների համար
5. Ստեփանավանի կենտրոնը իրազեկման միջոցառում է իրականացրել Ստեփանավանի գյուղ քոլեջի ուսանողների համար
6. Եղեգնաձորի կենտրոնը իրազեկման միջոցառում է իրականացրել Ջերմուկի երիտասարդների համար

ԱլավերդուԱնկյուն TV

«ՍՈՍԻ» և «ԽՈՒՍՏՈՒՓ» TV-ներ, տեղական թերթ, Կապանի ՕԿ

Եղեգնաձորի ՕԿ

Ստեփանավանի գյուղքոլեջ, Ստեփանավանի ՕԿ

7. Եղվարդի ՕԿ համակարգողները հանդիպել են Եղվարդի Վիքիմեդիա ակումբի անդամների հետ ներկայացրել Օրհուսի կոնվենցիան, Եղվարդի Օրհուս կենտրոնի գործունեությունը, ինչպես նաև խոսել է բնապահանական թեմաներով հոդվածներ գրելու մասին:

8. Արարատի Օրհուս կենտրոնը իրականացրել է 1 միջոցառում ապագա լրագրողների համար:

9. Գավառի Օրհուս կենտրոնը իրականացրել է դասընթաց տարածաշրջանի լրագրողների և Գավառի պետական համալսարանի լրագրության դասընթացի մասնակից ուսանողների համար: Դասընթացը վարել են Օրհուս կենտրոնների PR մենեջերի և Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողի կողմից:

10. Օրհուս կենտրոնների PR մենեջերի և Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողը Հայկական Օնլայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիայի խնդրանքով Հանրության բնապահպանական իրազեկության իրավունքի, Բնապահպանական տեղեկատվության պահանջարկի ու հանրամատչելի լեզվով բնապահպանական թեմաներով լուսաբանումների

վերաբերյալ դասախոսություն (պրեզենտացիա և հոդված) են ներկայացրել ԵՊՀ լրագրության ֆակուլտետի էկոլրագրության բաժնի ուսանողների և դասախոսների համար: http://aarhus.am/?page_id=12306

Երևանի պետական համալսարան

11. Հրազդանի Օրհուս կենտրոնում կայացել է «Օրհուսի կոնվենցիան և ԶԼՄ-ները» խորագրով դասընթաց, որին մասնակցել են ուսանողներ, երիտասարդ լրագրողներ, «Հրազդան» ՀԸ-ը, նաև «Առողջ միջավայր» նորաստեղծ ՀԿ-ն անդամներ: http://aarhus.am/?page_id=11264

12. Օրհուս կենտրոնները հատուկ ԶԼՄ-ների իրազեկման համար PR մենեջերի կողմից պատրաստված տեղեկատվական թերթիկը տարածել են, իսկ Դիլիջանի կենտրոնն այն տարածել է Facebook սոցցանցի միջոցով, կազմակերպել օնլայն քննարկում:

2/1.2 Ձեռք բերված արդյունքներ:

1. Բարձրացվել է ՔՀԿ-ների, ԶԼՄ ներկայացուցիչների, երիտասարդների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վերաբերյալ, ամրապնդվել և շրջակա միջավայրի վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելու գործում պատասխանատու անձանց պարտականությունների մասին նրանց գիտելիքները: Անմիջական մասնակիցների ընդհանուր թիվը՝ 130:

• Օրինակ Դիլիջանի կենտրոնի կազմակերպված օնլայն քննարկման արդյունքում միայն իրազեկվել և քննարկմանն ակտիվ մասնակցել է 35 օգտատեր, տեղեկատվությունը տպագրվել է Դիլիջան թերթում՝ ապահովելով իրազեկման առավել լայն շրջանակ:

ԴԻԼԻՋԱՆ

29 ՀՈՒԼԻՍԻ, 2015 Թ.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Օրհուսի կոնվենցիայի իրականացումը Հայաստանում

ՈՆՋԱՅՆԱԵՌ ՎԵՏԵՐԱՆ-ՇԱՀԱՐԱՐՈՒՏՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԼԻՊ ՇԱՀԱՐԱՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ամենամյա ավանդական դարձած ոչ ֆորմալ ուսուցողական ճամբարներ՝ Ջրվեժ, Ամառանոց, Ամառանոց-Ջրվեժ, Ամառանոց-Ամառանոց, Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց, Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց, Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց, Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց-Ամառանոց-

իրականացրել ՏԻՄ ներկայացուցիչների համար, որոնցից միայն Կապանի կենտրոնի միջացառմանը մասնակցել են ներկայացուցիչներ 40 համայնքներից, մյուսներին՝ 1 կամ 2 համայնքից: Միջոցառումները անց են կացվել ոչ միայն կենտրոններում, այլև գյուղական համայնքների գյուղապետարաններում: Օրինակ՝

http://aarhus.am/?page_id=10375&lang=en, http://aarhus.am/?page_id=10545&lang=en, http://aarhus.am/?page_id=10728&lang=en, http://aarhus.am/?page_id=10287&lang=en, http://aarhus.am/?page_id=10728&lang=en,

մարզի ՏԻՄ աշխատակիցների վերապատրաստման դասընթաց Սյունիքի մարզպետարանի հետ համագործակցությամբ Կապանի ՕԿ

Միջոցառումները անց են կացվել ոչ միայն կենտրոններում, այլև գյուղական համայնքների գյուղապետարաններում: Օրինակ՝

Կապանի ՕԿ

գ. Երնջատափ

ք. Վայք

Մուլքիիդպրոց



գ. Արաքսավան

գ. Մուլքի

գ. Եղեգնավան

գ. Գոռավան

գ. Շաղափ

2. Եղեգնաձորի ՕԿ_ն Վայք և Եղեգնաձոր քաղաքներում պետական մարմինների ներկայացուցիչներին, ուսանողներին ներկայացրել է շնորհանդես աղետների ռիսկերի նվազեցմանը վերաբերող օրենսդրական դաշտի վերաբերյալ:

2/2.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Բարձրացվել է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ, ամրապնդվել գիտելիքները: Մասնավորապես ՏԻՄ ներկայացուցիչներն իրազեկվել են «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված բնապահպանական վճարներից ազդակիր համայնքներին մասհանումների ու օերնքում նախատեսվող փոփոխությունների ու լրացումների ԲՆ օերնսդրական նախաձեռնության մասին: Ինչպես նաև համայնքային էկոլոգիական խնդիրները, հատկապես որոնք սերտորեն կապված են կլիմայի փոփոխության հետ, կառավարության որոշմամբ հաստատված փաստաթղթով առաջարկվող ֆինանսական նոր մեխանիզմի միջոցով լուծելու հնարավորության մասին:

Օձուն համայնք, Ալավերդու ՕԿ

Աքորի համայնք, Ալավերդու ՕԿ

Արգել համայնք, Եղվարդի ՕԿ

Գետահովիտ համայնք, Իջևանի ՕԿ

Բերդկունք համայնք, Գավառի ՕԿ

Աղնջաձոր համայնք, Եղեգնաձորի ՕԿ

2. Ամրապնդվել է տվյալ ՏԻՄ-ի ու ՕԿ-ի միջև գոյություն ունեցող կապը, ձևավորվել են նոր համագործակցային կապեր:

Մուլքի համայնք, Ապարանի ՕԿ

Արմաշ համայնք, Արարատի ՕԿ

Դիլիջան համայնք, Դիլիջանի ՕԿ

Կապուտան համայնք, Հրազդանի ՕԿ

Բյուրակն համայնք, Գյումրու ՕԿ

Ծովազարդ համայնք, Գավառի ՕԿ

Ենթագործողություն 2/3

<u>Հիմնվելով կայուն արտադրության և սպառման մոդելների, ԱԱՏՌ տվյալների վրա՝ աջակցել կամ իրականացնել վերապատրաստում և հանրային իրազեկման բարձրացման գործունեություն քաղաքացիների և ձեռնարկությունների ներկայացուցիչների համար</u>

2/3.1 Կատարված քայլեր

Մշտական խորհրդատվական աշխատանք է տարվել «ՌՈՒՍԱԼ-ԱՐՄԵՆԱԼ» ընկերության էկոլոգի հետ, ով Երևանի Օրհուս կենտրոնի հրավերով մասնակցել է նաև ԵԱՀԿ նախաձեռնած աշխատաժողովին՝ նվիրված շրջակա միջավայրի հարցերի շուրջ արդարադատության մատչելիությանը: Հետաքրքրված ընկերություններին է տրամադրվել նաև փորձագետ Էրիկ Գրիգորյանի Բնապահպանական վնասի հաշվարկի և այլ երկրներում ձեռնարկությունների անվնաս արտադրություն իրականացնելու պարտավորությունների մասին դասախոսության տեսագրության հղումը:

ԲԼԵՋԱՆ ՀԿ-ի կողմից պատրաստվել և ուղարկվել է գրություն՝ տեղեկանալու, թե Կառավարությունն ինչ քայլեր է ձեռնարկում ԱԱՏՌ արձանագրությունը վավերացնելու

ուղղությամբ: Ստացված տեղեկատվությունը տեղադրվել է www.aarhus.am կայքում, տարածվել շահագրիգիռ կողմերին:

«Միջազգային ԱԱՏՌ շաբաթ» միջոցառումների շրջանակներում նոյեմբերի 24-26-ը Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում կայացած Աղտոտչների արտանետումների և տեղափոխման ռեգիստրի մասին արձանագրությանը (այսուհետ՝ ԱԱՏՌ) նվիրված միջոցառումների մասին տեղեկատվությունը նույնպես տեղադրվել է կայքում, տարածվել են միջոցառման ամբողջական տեղեկատվության հղումները:

Կենտրոնները շահագրգիռ կողմերին են տրամադրել առանձին երկրների ԱԱՏՌ կայքերի ընդհանուր հղումը՝ http://prtr.net/ru/links/ :

2/3.2 Ձեռք բերված արդյունքներ

Հետաքրքրված ձեռնարկությունների էկոլոգները տեղեկացել են շրջակա միջավայրի աղտոտման համար գոյություն ունեցող բնապահպանական վճարների, ինչպես նաև ձեռնարկությունների կողմից բնապահպանական միջոցառումների իրականացման պարտավորությունների միջազգային փորձի մասին:

ՔՀԿ-ները, մասնավոր ընկերությունները և շահագրգիռ պետական կառույցները տեղեկացել են Հայաստանի կողմից ԱԱՏՌ արձանագրության վավերացմանն ուղղված գործողություններին ու վավերացման խոչընդոտներին:

ՔՀԿ-ները, մասնավոր ընկերությունները և շահագրգիռ պետական կառույցները տեղեկացել են, թե այլ երկրներ ինչպես են վարում ԱԱՏՌ արձանագրությամբ նախատեսված արդյունաբերական օբյեկտներից և այլ աղբյուրներից առաջացող աղտոտման կադաստրները:

Ենթագործողություն 2/4

Համագործակցել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման հարցերով զբաղվող այլ նախաձեռնությունների կամ ծրագրեր հետ՝ տեղական և ազգային մակարդակներում

2/4.1 Կատարված քայլեր

Կենտրոնները հաշվետու ժամանակահատվածում սերտ համագործակցել են ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի, Տնտեսահիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ, Հայաստանի անտառներ ՀԿ, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիայի, «Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ,

Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) պատասխանատու հանքարդյունաբերական կենտրոնի, Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցի (CENN) և այլ ՔՀԿ-ների հետ,

1. Հատկանշական է համագործակցությունը Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի հետ,

2. Կենտրոնները հաշվետու ժամանակահատվածում սերտ համագործակցել են ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնի, Տնտեսահիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ, ԱՌՆԱՊ-ի,ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան Հիմնադրամի, Հայաստանի անտառներ ՀԿ, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիայի, «Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ, «Էկոլուր» ՀԿ, Հայկական բնապահպանական ճակատ նախաձեռնության, ինչպես նաև տեղական ՔՀԿ-ների հետ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ (WWF Հայաստան, ԳԷՀ ՓԴԾ):

3. Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողն ընդգրկվել է «Աջակցություն փոքր ՀԷԿ_երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ ԲՆ երկխոսության միջոցով» ծրագրի համակարգող կոմիտեում:

4. «Հայաստանում ԳԷՀ ՓԴԾ 6-րդ գործառնական փուլի շրջանակներում Հայաստանի ծրագրային ռազմավարության մշակում» ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի հետ մարզային խորհրդակցական հանդիպների ու կարողությունների զարգացման դասընթացների են անցկացվել Գավառի, Կապանի, Եղեգնաձորի և Վանաձորի ՕԿ-ների աջակցությամբ:

Գավառի ՕԿ

Կապանի ՕԿ

Եղեգնաձորի ՕԿ

Վանաձոր

5. Դիլիջանի ՕԿ-ում, կենտրոնի աջակցությամբ և Կովկասի վայրի բնության Հիմնադրամիհետ համագործակցությամբ քննարկվել են Դիլիջան ազգային պարկում էկոտուրիզմի զարգացման հեռանկարները:

6. Ալավերդու և Կապանի Օրհուս կենտրոնների աջակցությամբ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) պատասխանատու հանքարդյունաբերական կենտրոնի և Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցի (CENN) հետ համագործակցությամբ, տեղի ունեցավ սեմինարներ «Հանքարդյունաբերության ռիսկերը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա» թեմայով,՝ նպատակ ունենալով հանրայնացնել տարածաշրջանում իրականացված հետազոտության արդյունքները՝ համայնքներում հանքարդյունաբերության հետ կապված թունավոր նյութերի ազդեցությունը նվազագույնի հասցնելու ձգտումով:

Ալավերդու ՕԿ

Կապանի ՕԿ

2/4.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Վերոնշյալ կառույցների հետ համագործակցության արդյունքում պլանավորվել ու իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված հանքերի շահագործման հանրային վերահսկողությանը, գործող ու նոր ՓՀԷԿ-երի շրջակա միջավայրի վրա հնարավոր հետևանքների կանխարգելմանն ու նվազեցմանը, Ռիո +20 գործընթացին, կայուն զարգացմանը և այլն

2. Ստորագրվել է համագործակցության հուշագիր ու առավել սերտ համագործակցության սկիզբ դրվել շրջակա միջավայրին սպառնացող վտանգների նվազեցման ու դրանց մասին իրազեկման ոլորտում Հայաստանի Օրհուս կենտրոնների և ԱՌՆԱՊ-ի միջև:

Համագործակցության շրջանակներում, 2015 թվականի հունիսին Վանաձորի, Ալավերդու, Ստեփանավանի, Ապարանի, Եղվարդի, Իջևանի, Գավառի, Կապանի և Երևանի Օրհուս կենտրոնների ներկայացուցիչները մասնակցեցին ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակում կազմակերպված «Բնապահպանական արտակարգ իրավիճակների կառավարում և FEAT-ի ինտեգրում» թեմայով դասընթացի: (մանրամասն՝ http://aarhus.am/?page_id=10750&lang=en):

ԱՌՆԱՊ հիմնադրամի նախագահը Հայաստանի Օրհուս կենտրոնների երեք ներկայացուցիչների հետ մեկտեղ մասնակցել է Վիեննայում կայացած տարեկան հանդիպմանը: Այնուհետ՝ հունիսի 11-ին, օրհուս կենտրոնների ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային հանդիպմանը քննարկվել են հիմնադրամի և կենտրոնների համատեղ հետագա քայլերը (մանրամասները՝ http://aarhus.am/?page_id=10745&lang=en):

Օրհուս կենտրոնների աշխատանքային երրորդ և չորրորդ հանդիպումներին՝ կենտրոններն անցան ևս մի դասընթաց, որը մշակել էր փորձագետ Նվեր Պողոսյանը, նախկինում ձեռքբերված գիտելիքների ամրապնդման նպատակով (մանրամասները՝ http://aarhus.am/?page_id=12215&lang=en):

Ոլորտում համագործակցության շրջանակում կենտրոնները ներառվել են Արտակարգ տեղեկատվական ցանցի մեջ, աշխատանքային չորրորդ հանդիպմանը ՏԿԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալՆիկոլայ Գրիգորյանը ներկայացրեց երկրաշարժի և այլ խոշոր աղետների դեպքում մի կետից պետության ընդհանուր՝ ստույգ, որևէ մեկի հետարքրքության շրջանակներից դուրս, օգտաշատ և հանրությանն ուղղված տեղեկատվության տարածումն ապահովող տեղեկատվական «Արտակարգ ցանց»-ի գաղափարը, դրա ընդլայնման ու արդյունավետության բարձրացման գործում Օրհուս կենտրոնների դերը. http://aarhus.am/?page_id=13244



3. Վերոնշյալ կառույցների հետ համագործակցության արդյունքում պլանավորվել ու իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված հանքերի շահագործման հանրային վերահսկողությանը, գործող ու նոր ՓՀԷԿ-երի շրջակա միջավայրի վրա հնարավոր հետևանքների կանխարգելմանն ու նվազեցմանը, Աղետների ռիսկի նվազեցմանը, Ռիո +20 գործընթացին, կայուն զարգացմանը, բնապահպանական խնդիրների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացների վրա ՔՀԿ-ների ազդեցության մեծացմանը և այլն՝ ներգրավելով նաև պետական կառույցներին:

4. Ուսումնասիրված 75 ՓՀԷԿ_երից միայն մեկն է համապատասխանել նախագծին:

5. «Հայաստանում ԳԷՀ ՓԴԾ 6-րդ գործառնական փուլի շրջանակներում Հայաստանի ծրագրային ռազմավարության մշակում» ծրագրի շրջանակներում շահագրգիռ կողմերի հետ մարզային խորհրդակցական հանդիպների ու կարողությունների զարգացման դասընթացներից 3-ն իրականավել են Գավառի, Կապանի, Եղեգնաձորի ՕԿ_ներում՝ կենտրոնների աջակցությամբ, ևս 1 դասընթացի իրականացմանն ու հանրության ներգրավմանը աջակցել է Վանաձորի ՕԿ-ն:

6. Մասնակիցների կողմից կարևորվել է Դիլիջան ազգային պարկում իրականացվող աշխատանքների թափանցիկությունը, որը հնարավորություն կտա շահագրգիռ կառույցներին իրենց առաջարկներով մասնակցություն ունենալ Դիլիջան ազգային պարկի էկոտուրիզմի ռազմավարության մշակմանը: Որոշվեց կազմակերպել քննարկում ավելի մեծ ներկայացուցչական կազմով:

7. Ընդհանուր թվով՝ 45 մասնակից Ալավերդիից և 30 հոգի Կապանից տեղեկացան թե՛ նմուշառման մեթոդների, թե՛ լաբորատոր հետազոտության, թե՛ կիրառված գործիքների վերաբերյալ, ծանոթացան թե ինչպես մեղմացնել առողջության վրա ծանր մետաղներով պայմանավորված ռիսկերը:

Ենթագործողություն 2/5

Նպաստել առավել ակտիվ քաղաքացիների ներգրավմանը շրջակա միջավայրի պահպանության գործընթացներին՝ աջակցելով նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, կազմակերպել բնապահպանական խնդիրներ լուսաբանող միջոցառումներ, մասնավորապես Օրհուսի կոնվենցիայի խնդիրներին առնչվող:

2/5.1 Կատարված քայլեր

Կենտրոնները աշխատանք են տարել գիտակից քաղաքացիական խմբերի ձևավորման գործում, որոնք խորքային են ընկալում խնդիրը և կարող են սեփական ուժերով իրագործել իրենց իրազեկված լինելու և մասնակցելու իրավունքները

1. Հրազդանի և Դիլիջանի Օրհուս կենտրոնները, տեղեկանալով Կապուտանի երկաթի հանքի շահագործման նպատակի մասին, իրազեկել են Կապուտան համայնքի հանրությանը, պարզաբանել նրանց համար ՇՄԱԳ նախագիծը, Օրհուսի կոնվենցիայով պաշտպանված իրենց իրավունքները, ներկայացրել փորձագիտական պարզաբանումներ http://aarhus.am/?page_id=10158&lang=en,

2. Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողն այցելություններ է կատարել Ֆիոլետովո համայնք և աջակցել ազգային փոքրամասնություն ներկայացնող ռուսազգի մալականներով բնակեցված Ֆիալետովո համայնքի բնակիչներին՝ ճիշտ, կազմակերպված գործողություններ իրականացնելու հանրային լսումների իրականացման փուլում:

3. Ալավերդու Օրհուս կենտրոնն աջակցել է դեպի Մեծ Այրումի Նահատակ կոչվող պոչամբար մեդիա-տուրի կազմակերպմանը, աջակցել ակտիվ քաղքացիական խմբի ձևավորմանը,

4. Ապարանի Օրհուս Կենտրոնի աջակցությամբ դեռևս նախկինում Մելիքգյուղում ձևավորված ակտիվ քաղաքացիական խումբը 16. 04.15-ի .հանրային լսման ժամանակ հիմանվոր հարցեր է բարձրացրել ու դեմ արտահայտվել՝ ներկայացվող վայրում ու ներկայացվող եղանակով հանքի շահագործմանը:http://aarhus.am/?page_id=10735

5. Հրազդանի ՕԿ հենքի վրա ստեղծվել է նոր ՔՀԿ՝ «Առողջ միջավայր» բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման:

6. Ստեփանավանի Օրհուս կենտրոնը շարունակել է համագործակցությունը Ֆիոլետովո համայնքի ակտիվ խմբի հետ՝ ուղղորդելով իրենց իրավունքների պաշտպանության գործում, քանի որ, չնայած հանքի շահագործումը կասեցվել է, բայց հանքի տարածք պարբերաբար մարդիկ են այցելում, չափումներ կամ այլ գործողություններ իրականացնում:

7. Ալավերդու ՕԿ հենքի վրա ստեղծված կամավորական խումբը ստեղծել է «Նոր Ալավերդի» ՀԿ, որն ակտիվ գործունեություն է ծավալում, այս անգամ Թեղուտ ՓԲԸ կողմից հանքի ընդլայնման նպատակով ուսումնասիրությունների մասին համայնքներին իրազեկման ուղղությամբ:

8. Գյումրու ՕԿ-ն աջակցել և հանդիպում է կազմակերպել SOS Գյումրի ZOO նախաձեռնության Երևանի և Գյումրու անդամների հետ

9. Սյունիք համայնքի համայնքապետի հրավերով, Կապանի Օրհուս կենտրոնի համակարգողն այցելեց համայնք՝ հողերի մի մասը կոյուղաջրերով ողողված լինելու մասին տեղեկատվության մասին պարզաբանումներ տալու նպատակով: Բնակիչներից շատերը ճշգրիտ տեղեկատվություն չունեին իրավիճակի մասին, չգիտեին ում դիմել, անհանգստացած էին, որ խնդիրը կարող է ազդել գյուղմթերքների վաճառքից ստացվող նրանց եկամտի և իրենց առողջության վրա:

2/5.2 Հեռք բերված արդյունքներ

1. Հրազդանի Օրհուս կենտրոնի կողմից Կապուտան համայնքի հանրությանը ՇՄԱԳ նախագծի և Օրհուսի կոնվենցիայով պաշտպանված իրենց իրավունքների մասին փորձագիտական պարզաբանումներ ներկայացրելուց հետո Կապուտանցիներն իրենք են հանրային լսման ժամանակ հիմանվոր հարցեր բարձրացրել ու դեմ արտահայտվել՝ ներկայացվող վայրում ու ներկայացվող եղանակով հանքի շահագործմանը:

2. Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողի համայնք բազմաթիվ այցելությունների և ճիշտ գործողությունների արդյունքում մալականներով բնակեցված Ֆիոլետովո համայնքի ռուսազգի բնակիչները, հանրային լսումների իրականացման փուլում

համայնքային մասնակցություն են ցուցաբերել՝ իրենց ձայնը լսելի դարձնելու համար վերջնական որոշման կայացման առումով:

3. Ալավերդու Օրհուս կենտրոնի կողմից կատարած աշխատանքների արդյունքում բնակիչներն ու ակտիվիստները պահանջել են, որ ընկերությունը կատարի իր պարտավորությունները հին պոչամբարի շահագործման ու ռեկուլտիվացման առումով ու նոր միայն պլանավորի նոր պոչամբարի կառուցումhttp://aarhus.am/?page_id=8975&lang=en, http://aarhus.am/?page_id=9541&lang=en ,

4. Մելիք գյուղում ձևավորված ակտիվ քաղաքացիական խումբը իրենք պատրաստ են պաշտպանելու առողջ ու ապահով շրջակա միջավարյում ապրելու իրենց իրավունքը:

5. Հրազդանի Օրհուս կենտրոնը ունի իր իրավունքների մասին գիտակից նոր գործընկերներ, ովքեր պայքարում են առողջ միջավայր ունենալու համար:

6. Ֆիալետովո համայնքի ակտիվ խմբի անդամները հետևողական աշխատանք են տանում տեղեկացված լինելով շրջակա միջավայրի պահպանության գործընթացում իրենց իրավունքների ու մասնակցության մասին :

7. Շուրջ 20 երիտասարդներ գիտակցում են իրենց իրավունքները, ներգրավված են ոչ միան շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող, այլև համայնքի զարգացմանը վերաբերող այլ հարցերում:

8. Կենդանիների տեղափոխման համար կնքվել է պամանագիր, կենդանիների կերի համար գումար է ձեռք բերվել և կենդանիները կերակրվել են:

9. Կապանի Օրհուս կենտրոնի միջնորդության արդյունքում կոյուղատարի դիտահորերի անցքերը տեղի անասնապահական համալիրի ղեկավարության ջանքերով բետոնապատվեցին՝ բացառելով արտահոսքը: Պատասխանատու կառույցի՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի Կապանի մասնաճյուղի պատասխանատուներն էլ մետաղական խողովակի անցքերը փակեցին ու ծածկեցին գրունտով:

Ենթագործողություն 2/6

Աջակցել և խթանել ՔՀԿ-ների միջև համագործակցությանը և գործընկերային հարաբերությունների ձևավորմանը՝ տեղական և ազգային մակարդակներում

2/6.1 Կատարված քայլեր

Օրհուս կենտրոնները օնլայն տեղեկագրերի և քննարկումների կազմակերպման միջոցով աշխատանք են տարել ՔՀԿ-ների համաձայնեցված համատեղ քայլերի պլանավորման ուղղությամբ, իրազեկել ՔՀԿ-ներին ոլորտում իրենց գործընկերների գործունեության վերաբերյալ:

Այս առումով օրինակելի է Գավառի և Հրազդանի կենտրոնների փորձը, որտեղ տեղի և մարզի հկ-ների միջև ստեղծվել է մշտական համագործակցություն:

http://aarhus.am/?page_id=9180&lang=en

http://aarhus.am/?page_id=10006&lang=en

Օրհուս կենտրոնները օնլայն տեղեկագրերի և քննարկումների կազմակերպման միջոցով աշխատանք են տարել ՔՀԿ-ների համաձայնեցված համատեղ քայլերի պլանավորման ուղղությամբ, իրազեկել ՔՀԿ-ներին ոլորտում իրենց գործընկերների գործունեության վերաբերյալ: Օրհուս կենտրոնները մշտական համագործակցության մեջ են Էկոդաշինքի հետ, համատեղ լայն իրազեկում է իրականացվել հանրության շրջանում, նաև համատեղ նամակ է պատրաստվել ՀՀ վարչապետին կապված Սևանա լճից Ուրմիրա լիճ ջուր տեղափոխելու հետ կապված:

http://aarhus.am/letters_2015/11.08.15-letter%20from%20Aarhus%20&%20ecocoalition.pdf

2/6.2 Հեռք բերված արդյունքներ

Աշխատանքները տարվում են համատեղ ու համաձայնեցված, շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ համատեղ են մշակվում առաջարկություններ ու նամակներ և ներկայացվում պատկան մարմիններին:

Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ գործողություններն իրականացվում են համաձայնեցված և ապահովվում են ավելի լայն իրազեկում:

http://aarhus.am/letters_2015/patasxan_03_09.pdf

Գործողություն 1.1.3 Օրհուս կենտրոնները կնպաստեն մատչելի բնապահպանական տեղեկատվության հասանելիությունը տարբեր գործիքների միջոցով (www.aarhus.am) վեբ կայք, տեղեկագրեր, տեղեկատվական վահանակներ, և այլն), ավելի ակտիվ հաղորդակցվելու են տեղական եւ ազգային ԶԼՄ-ների հետ:

Ենթագործողություն 3/1

Տեղեկատվության հավաքագրում վեբկայքի համապատասխան բաժինները թարմացնելու համար՝ «Օրհուս կենտրոններին առնչվող փաստաթղթեր», «Միջազգային Կոնվենցիաներին», «Փաստաթղթեր կապված Օրհուսի կոնվենցիայի հետ», «Օրհուս կենտրոնների գրադարան», «Հղումներ», «Կազմակերպություններ», «Հրապարակումներ» և այլն,

3/1.1 Կատարված քայլեր

2015թ. հաշվետու ժամանակահատվածում www.aarhus.am կայքը մշտապես գործել և թարմացվել է.

1. Aarhus onlineTV-ի համար պատրաստվել ու տեղադրվել են հասարակական լսումների ու քննարկումների ամբողջական տեսաձայնագրություններ, ինչպես նաև հարցազրույցներ: հատկանշական է Օրհուսի Կոնվենցիայի, 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլընտրանքային և անկախ անկողմնակալ մարմնի ստեղծման հնարավորությունների մասին փորձագիտական հարցազրույցի զետեղումը, որը մեծ հետաքրքրություն է ներկայացրել շահագրգիռ հանրության շրջանում http://aviplatform.com/media.details.php?mediaID=3432&page=1&&status=all:

2. www.aarhus.am կայքում զետեղվել է շուրջ 225 տեղեկատվական և վերլուծական նյութ կենտրոնների գործողությունների ու կենտրոններում այլ կազմակերպությունների նախաձեռնությամբ տեղի ունեցած միջոցառումների, հանրային լսումների ու քննարկումների վերաբերյալ: Բոլոր նյութերի անգլերեն տարբերակները նույնպես տեղադրվել են, ըստ անհրաժեշտության նաև ռուսերեն:

3. Կենտրոններն իրենց հերթին Ախթալայի ԼՀԿ-ի «Նահատակ» պոչամբարի և պլանավորվող նոր պոչամբարի, Արմանիսի, Սոթքի, Ֆիոլետովոյի, Մելիքգյուղի ոսկու հանքավայրերի ընդլայնման կամ շահագործման ՇՄԱԳ նախագծերի, ՓՀԷԿ-ի ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն են տրամադրել Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետներին, Հայաստանի անտառներ ՀԿ-ին, անկախ փորձագետների:

4. Տարաբնույթ հարցերի վերաբերյալ համառոտ էլեկտրոնային տեղեկագրեր են պատրաստվել ու Օրհուս կենտրոններին, լրատվամիջոցներին և այլ շահագրգիռ ՔՀԿ-ի տարածվել ծրագրի PR պատասխանատուի կողմից: Սերտ համագործակցություն է տարվել լրատվամիջոցների հետ, հատկապես Ազատություն ռադիոկայանի, Կենտրոն Հեռուստաընկերության, Հայկական ժամանակ օրաթերթի, Արմենպրես լրատվական գործակալության, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի սկսնակ լրագրողների և տեղական ու

մարզային ԶԼՄ-ների հետ, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Արտակարգ Ալիք աղետների ռիսկի նվազեցմանը միտված տեղեկատվական կենտրոնի հետ (*մանրամասն տեղեկատվությունը կից Հավելված 1-ում, հայերեն և անգլերեն լեզվով):*

5. Ըստ անհրաժեշտության, համակարգողները տրամադրել են հարցազրույցներ ծառերի էտի, Սևանա լճի ավազանում օգտակար հանածոների որոնողական աշխատանքների, շրջակա միջավայրի աղտոտման, Գեղարոտ գետի ջրի աղտոտման վերաբերյալ, հանքարդյունաբերության վնասների և այլնի մասին:

6. «Նորություններ Օրհուս կենտրոններից բաժնում» տեղադրվել է 175 լրատվական, ըստ անհրաժեշտության նաև 10 վերլուծական նյութ, ինչպես երևում է /կից 2 հավելված/ ըստ կենտրոնների: Բոլոր նյութերը խմբագրվել և համապատասխանեցվել են կայքի բովանդակային և տեխնիկական ֆորմատին.

7. Պատկան մարմիններին է ուղղվել տեղեկատվության ստացման 95 հարցում, որոնցից 7-ը համատեղ, այդ թվում մեկը, ուղղված Ֆինանսների նախարարությանը՝ կրկնակի: Հարցումները տեղադրվել են կայքում՝ համառոտ վերնագրերով, որոնք կազմվել են հասարակայնության հետ կապերի պատասխանատուի կողմից:

8. Բոլոր նյութերը թարգմանվել են անգլերեն, նյութերի թարգմանությունն ապահովվել է Եղվարդի Օրհուս կենտրոնի համակարգող-թարգմանիչ Անուշ Բեյբությանի և Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող Մարինե Մազմանյանի կողմից, Արարատի, Եղվարդի և Եղեգնաձորի կենտրոնի նյութերը թարգմանվել են հենց համակարգողների կողմից: Հարցումների համար կազմված վերնագրերը ևս թարգմանվել են Մարինե Մազմանյանի կողմից: Բոլոր նյութերը (http://aarhus.am/?page_id=757) և հարցումներն իրենց պատասխաններով (http://aarhus.am/?page_id=132) կարելի է գտնել կայքի համապատասխան բաժիններում:

9. Կայքի «Փորձագետի անկյուն» բաժնում տեղադրվել է 28 նյութ՝ վերլուծություն, կարծիք կամ առաջարկ՝ պատրաստված կազմված «Տնտեսահիրավական վերլուծությունների կենտրոն», Էկոակադեմիա, Էկոիրավունք, Կանաչների միություն, «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, ԵՊՀ կայուն զարգացման կենտրոնի, Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի և անկախ փորձագետների կողմից: Ինչպես նաև «Բլեջան» ՀԿ նամակն ու մեկնաբանությունը, թե ի՞նչ գործողություններ են իրականացվել 2003թ. ի վեր «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրի մասին» արձանագրությունը վավերացնելու ուղղությամբ, ի՞նչն է խոչընդոտում արձանագրության վավերացմանը:

10. Թարմացվել են ԵՊՀ Կայուն զարգացման կենտրոնին հատկացված էջը՝ իրենց իսկ կողմից տրամադրված կարևոր իրադարձությունների մասին տեղեկատվական նյութերով:

11. Թարմացվել է կայքի Գրադարանի բաժինը՝ 10-ից ավելի նոր թեմատիկ գրականության հղումներով:

12. Պարբերաբար թարմացվել է կայքի Էկոլրահոս բաժինը՝ կայքի օգտագերերի համար ապահովելով ոլորտի հետաքրքիր ու կարևոր իրադարձությունների մասին լուրերի, ուսումնասիրությունների ու լրագրողական հետաքննությունների հղումներ:

13. Aarhus օնլայն TV միջոցով տարածվել է 20 տեսաֆիլմ՝ 7 հանրային լսման ու հանրային քննարկման տեսաձայնագրություն (4-ը անգլերեն սուբտիտրերով), 1 դեպի Նահատակ պոչամբար մեդիա տուրի տեսաձայնագրություն, 4 հարցազրույց (անգլերեն սուբտիտրերով), 8 դասախոսություն կամ զեկույց:

Հանրային լսումներ և քննարկումներ՝

Նավթի և գազիորոնողական աշխատանքների մասին մասնագիտական քննարկման http://aviplatform.com/media.details.php?mediaID=3231&page=1&&status=all ,

- Դեպի Նահատակ պոչամբար մեդիա-տուրի http://aviplatform.com/media.details.php?mediaID=3401&page=1&&status=all ,
- Ամուլսարի հանքավայրի շահագործման նախագծի մասնագիտական քննարկման http://aviplatform.com/media.details.php?mediaID=3405&page=1&&status=all ,
- Կարճաղբյուրում տեղի ունեցած հասարակական լսումների http://aviplatform.com/media.details.php?mediaID=3414&page=1&&status=all ,
- ԵՊՀ կայուն զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցած հանքաարդյունաբերության ոլորտի քննարկման ամբողջական տեսաձայնագրությունները http://aviplatform.com/user.items.php?id=185 :
- Աղբահանության ռազմավարության նախագծի հասարակական քննարկման http://aviplatform.com/media.details.php?mediaID=3452&page=1&&status=all ,
- Ձկան վերամշակման գործարանի և Սևանի իշխանի աճեցման մոդելային ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերի վերաբերյալ հանրային լսումների տեսագրությունը http://aviplatform.com/media.details.php?mediaID=3494&page=1&&status=all http://aviplatform.com/media.details.php?mediaID=3493&page=1&&status=all :

Հարցազրույցներ՝

- Հարցազրույց Սահմանադրական դատարանի նախագահի ավագ խորհրդական Անահիտ Մանասյանի հետ, այն մասին, թե, արդյոք, կարող է Օմբուդսմենի ինստիտուտը Հայաստանում հանդիսանալ Օհուսի կոնվենցիայով նախատեսված շրջակա միջավայրին առնչվող որոշումները վերանայող անկախ ու անկողմնակալ այլընտրանքային մարմին: http://aviplatform.com/media.details.php?mediaID=3432&page=1&&status=all#sthash.2efUNW3g.dpuf
- Պատրաստվել և հրապարակվելէ 2 հարցազրույց իրավաբան Նազելի Վարդանյանի հետ՝ Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի և երկրորդը՝ Ամուլսարի հանքի շահագործման նախագծի ազգային օրենսդրությանն անհամապատասխանության մասին http://aviplatform.com/media.details.php?mediaID=3430&page=1&&status=all :
- Հարցազրույց Ռուզաննա Ղազարյանի հետ՝ Օրհուսի Կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի V/9a որոշման կատարման մասին Կոմիտեի հիշեցման

մասին http://aviplatform.com/media.details.php?mediaID=3491&page=1&&status=all

Դասախոսություններ և զեկույցներ՝

- Էրիկ Գրիգորյանի դասախոսությունը շրջակա միջավայրին վնասի հաշվարկի ու հատուցման մեթոդաբանության վերաբերյալ http://aviplatform.com/media.details.php?member_id=185&type=video#sthash.BBz8HZTV.dpuf
- Արթուր Նիկողոսյանի դասախոսությունը Գյուրջի և իր կյանքի և ուսմունքի, http://aviplatform.com/media.details.php?mediaID=3486&page=1&&status=all բնապահպանական հիմնախնդիրների թաքնագիտական և իմաստնական ընկալումների մասին (մաս1 http://aviplatform.com/media.details.php?mediaID=3487&page=1&&status=all, մաս2 /աշխատանքային փուլում է/),
- Գևորգ Պետրոսյանի պրեզենտացի ալյուրի հարցստացման վտանգների և օրենսդրական նախաձեռնության մասին http://aviplatform.com/media.details.php?member_id=185&type=video
- Նվեր Պողոսյանի դասախոսությունը Աղետների ռիսկի նվազեցումը գիտելիքների միջոցով /աշխատանքային փուլում է/:
- Նիկոլայ Գրիգորյանի ելույթը Արտակարգ տեղեկատվական ցանցի ստեղծման մասին /աշխատանքային փուլում է/:

14. Լրատվամիջոցների հետ համագործակցությունը ապահովվել է տարբեր եղանակներով՝ համապատասխան փորձագետների կամ կառույցների կոնտակտների տրամադրման, տեղեկատվության տրամադրման, պարզաբանումների տրամադրման, վիդեոֆայլերի կամ լուսանկարների տրամադրման միջոցով:

3/1.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Կայքի այցելուների թիվը հունվար - դեկտեմբեր ամիսներին կազմել է **36 440** մարդ՝ **124** երկրներից և **106 050** դիտված էջ:

2.Կայքում նյութերի դիտվածությունը հասնում է մի քանի հարյուրների, նութեր կան անգամ 2-3 հազարի:

3. Aarhus օնլայն TV-ում զետեղված տեսագրությունների դիտումների քանակը 300-1600 սահմաններում, ավելացել է նաև արխիվային նյութերի դիտումների քանակը:

4. Ընթացիկ ժամանակահատվածում տպագրվել է Կենտրոնների գործունեությանն առնչվող ավելի քան 45 հոդված կամ ռադիոհաղորդում (կից Հավելված 2, PR պատասխանատուի հաշվետվությունը), Տեղական և հանրապետական հեռուստաալիքների հիմնականում լրատվական հաղորդումներով, ինչպես նաև Կենտրոն հեռուստաընկերության Էկոլոգիկա թեմատիկ հաղորդմամբ, Էպիկնտրոն լրատվական հաղորդումով, այլ ՀՏ-ների լուրերով, տեղական TV-ների առավոտյան հաղորդումներով, Ազատություն ռադիոկայանով և youtube-ով Կենտրոնների գործունեության մասին ցուցադրվել է ավելի քան 25 հեռուստառեպորտաժ, կամ առանց մեկնաբանությունների տեսաձայնագրություն:

5. Ընթացիկ ժամանակահատվածում Լրատվամիջոցների այն անդրադարձերը, որոնց մասին համագործակից լրագրողները տեղեկացրել են մեզ, 67-ն են:

Գործողություն 1.1.4 Օրհուս կենտրոնները կնպաստեն բնապահպանական կրթություն և պատասխանատու վարքագծի ձևավորմանը հասարակության շրջանում շրջակա միջավայրի վերաբերյալ, այդ թվում, Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքներին:

Ենթագործողություն 4/1

Խթանել բնապահպանական կրթությունը և աջակցել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրավունքների իրականացմանը

4/1.1 Կատարված քայլեր

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդների էկոկրթական մակարդակի բարձրացմանը, կազմակերպվել է 51 էկոկրթական միջոցառում՝ նվիրված էկոտուրիզմին, օրգանական գյուղատնտեսությանը, վայրի բնության, էնդեմիկ ու հազվագյուտ տեսակների պահպանության կարևորությանը, գայլերի թվաքանակի կրճատման քաղաքականության անարդյունավետությանն ու հնարավոր անցանկալի հետևանքներին, օզոնային շերտի պահպանությանը, աղետների ռիսկին, թափառող կենդանիներին, հանրության իրազեկ լինելու և մասնակցելու իրավունքներին, աղբի կառավարմանը, աղմուկին՝ որպես էկոլոգիական աղտոտվածության տարր, Գլոբալ բնապահպանական հիմնախնդիրներին ու ՀՀ-ում բնական էկոհամակարգերի արդյունավետ օգտագործման հնարավորություններին հանրության իրազեկ լինելու և մասնակցելու իրավունքներին, երիտասարդության քաղաքացիական ակտիվության կարևորությանը, :

4/1.2 Ձեռք բերված արդյունքներ

Ավելի քան 1000 աշակերտներ, ուսանողներ, ուսուցիչներ, ՀԿ ներկայացուցիչներ Հայաստանի ավելի քան 14 քաղաքներից, ստացել են բնապահպանական գիտելիներ, իրազեկվել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրենց իրավունքների մասին, ձեռքբերել պատասխանատվություն շրջակա միջավայրի և վայրի բնության պահպանության առումով, դարձել են առավել նախաձեռնող:

Ենթագործողություն 4/2

Աջակցել հանրային խորհրդակցության կազմակերպման գործընթացում

4/2.1 Կատարված քայլեր

Կենտրոնները Ճանապարհային քարտեզի 5.2 կետի համաձայն աջակցել են հասարակայնության համար խորհրդատվության կազմակերպման գործընթացին կամ իրենք են տրամադրել համապատասխան խորհրդատվություն, այդ ուղղությամբ իրականացնելով ավելի քան **350** գործողություն (այդ թվում 271- ը ՕԿ-ների կողմից, մնացածը՝ PR մենեջերի կողմից ուսանողների, լրագրողների, գործընկեր տարաբնույթ կազմակերպությունների տրված խորհրդատվությունը):

4/2.2 Ձեռք բերված արդյունքներ

1. 350 քաղաքացիներ և քաղաքացիական խմբեր, լրատվամիջոցներ, կրթօջախներ, ոլորտում գործող պետական և ոչ պետական կազռույցներ ձեռք են բերել անհրաժեշտ խորհրդատվություն:
2. Նշված խմբերի հետագա քայլերը հիմնվել են մասնագիտական հիմնավոր տեղեկատվության վրա և առավել արդյունավետ են դարձել:

16/07/2015 15:41





Ենթագործողություն 4/3

<u>Իրականացվող ծրագրի նպատակներին համահունչ մշակել գործունեության աշխատանքային ծրագիր, հաշվի առնելով տարածաշրջանի բնապահպանական առանձնահատկությունները և առկա իրողությունները:</u>

4/3.1 Կատարված քայլեր

Վերոնշալ գործողությունների իրականացումից առաջ, և դրանց իրականացման ուղղությամբ աշխատանքներ սկսելուց առաջ, յուրաքանչյուր կենտրոնում, տեխնիկական հանձնարարականի կենտերի հիման վրա մշակվել են տարեկան աշխատանքային պլաններ, հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկություններն ու տեղի բնապահպանական հրատապ խնդիրները:

10 կենտրոնում պլանը հաստատվել է փորձագետների խորհրդի նիստով, մյուսների դեպքերում, հաշվի առնելով կենտրոնի փորձագետների զբաղվածությունը, պլանները նրանց հետ համաձայնեցվել են օնլայն:

http://aarhus.am/images/Kapan/Kapan_Protocol.pdf
http://aarhus.am/images/Yeghvard/Protocol_eghvard.pdf
http://aarhus.am/images/Dilijan/Dilijan_Ashxatanqajin%20tsragir.pdf
http://aarhus.am/images/Alaverdi/Work%20plan%20alaverdi%20aarhus%202015.pdf
http://aarhus.am/images/Ijevan/Ijevan_Ashxatanqayin%20tsragir1.pdf
http://aarhus.am/images/Gavar/Gavar_ashx.%20plan.pdf
http://aarhus.am/images/Aparan/Aparan_plan_2015.pdf
http://aarhus.am/?page_id=9766
http://aarhus.am/images/Hrazdan/plan2015.pdf
http://aarhus.am/?page_id=9502

4/3.2 Հետք բերված արդյունքներ:

Հաշվետու ժամանակահատվածում գործող 14 կենտրոններից 10-ի համակարգողները հաշվետու են եղել փորձագետների խորհուրդներին 2014թ.-ի կատարած աշխատանքների հետ կապված խորհրդի նիստի միջոցով, մյուս 3 կենտրոնների խորհրդի հետ աշխատանքը տարվել է օնլայն, փորձագետների օգնությամբ կազմվել և հաստատվել են տարեկան աշխատանքային պլաններ:

Իջևան ՕԿ

Ապարանի ՕԿ

Դիլիջան ՕԿ

Կապանի ՕԿ

Արարատի ՕԿ

Եղվարդի ՕԿ

Ստեփանավանի ՕԿ

Գավառի ՕԿ

Հրազդանի ՕԿ

Ալավերդու ՕԿ

Կապանի ՕԿ-ն նունիսկ իրականացրել է տարեկան ամփոփիչ խորհրդի նիստ, ներկաացրել է կենտրոնի կողմից կատարած աշխատանքի կատարողականի մասին:

Կենտրոնների փորձագիտական խորհուրդների անդամները մշտական կապի մեջ են եղել համակարգողների հետ, գործողություններն իրականացվել են համաձայնեցված:

Ենթագործողություն 4/4

Իրականացնել ծրագրի ղեկավարի կողմից հաստատված ամենամսյա գործունեության պլանով նախատեսված գործողությունները, մասնագիտական խորհրդատվության ապահովում՝ կենտրոնների աշխատանքների կազմակերպման, իրականացման մասով

4/4.1 Կատարված քայլեր

1. Ծրագրի մեկնարկի սկզբից պլանավորվել ու մայիս ամսից գործի է դրվել գործողությունների օրացույց, որն ըստ ամիսների ու ըստ կենտրոնների զետեղված է կայքում և որը առավել տեսանելի ու վերահսկելի է դարձնում կենտրոնների կողմից պլանավորվող ու իրականացվող գործողությունները:



2. Դրան զուգահեռ կայքում տեղադրվել են նաև նախատեսվող միջոցառումների որոշ մասի հայտարարությունները, մյուսների մասին հանրության իրազեկումն ապահովվել է տեղական շահագրգիռ կազմակերպությունների ու քաղաքացիների էլեկտրոնային փոստի հասցեների, հեռախոսազանգերի միջոցով:

Ենթագործողություն 4/5

Համակարգողների համար հանդիպումների և վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես ԵԱՀԿ այլ ծրագրերի մասնագետների կողմից, նաև Կառավարական կառույցներից/Աշխատանքային հանդիպումներ Երևանում/

4/5.1 Կատարված քայլեր

1. Ծրագրի արդյունավետ իրականացմանն աջակցել է ծրագրի ղեկավարի օգնականը և ծրագրի PR պատասխանատուն: Մշտապես ծրագրի ղեկավարի, ղեկավարի օգնականի և PR պատասխանատուի կողմից իրականացվել է մասնագիտական խորհրդատվություն կենտրոնների համակարգողներին, ուղղություն են տվել համակարգողներին խնդրահարույց հարցումների պատասխաններին ճշգրիտ արձագանքելու հարցերում: Հատկապես մշտական խորհրդատվություն է տրվել Եղեգնաձորի նորանշանակ համակարգողներին՝ աշխատանքները գրագետ ու ճիշտ կազմակերպելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում պլանավորված 4 աշխատանքային հանդիրպումներն էլ իրականացվել են: Դրանք տեղի են է ունեցել Երևանի Օրհուս կենտրոնում: ՕԿ_ների բոլոր աշխատանքային հանդիպումների ընթացքում տեղի է ունեցել փորձի փոխանակում, քննարկվել են աշխատանքային հարցեր, խոչընդոտների բացահայտում և ուղղորդում: Նաև իրականացվել են մի քանի դասախոսություններ՝ կենտրոնների աշխատակիցների կարողությունները բարձրացնելու նպատակով:

ա/ Առաջին հանդիպման ժամանակ՝ 31.03.15թ., ներկայացվել է ծրագրի իրականացման

ընթացքին վերաբերող աշխատանքային մի շարք հարցեր, ծրագրի նպատակները, արդյունքներին հասնելու բոլոր գործողությունները, նաև ծրագրի բյուջեն: /http://aarhus.am/?page_id=9032/

բ/ Երկրորդ հանդիպմանը՝ 11.06.15թ., ներկայացվել է 3 ամսվա ընթացքում կատարած աշխատանքները և անցկացվել դասընթաց՝ «Պետական մարմինների իրավական ակտերի գործողության և անգործության վիճարկման ընթացակարգային հիմնախնդիրները» թեմայով, փորձագետ, ի. գ. դ. Գևորգ Դանիելյան: /http://aarhus.am/?page_id=10703/

31.03.2015, 1-ին

11.06.2015, 2-րդ

գ/ Երրորդ հանդիպմանը ողջույնի խոսքով հանդես եկավ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Մարդու իրավունքների հարցերով պատասխանատու Ռադկա Ռուբիլինան: Քննարկվեցին կենտրոնների ընթացիկ ու հետագա աշխատանքների հետ կապված հարցեր: Համակարգողների կարողությունների զարգացման նպատակով՝ փորձագետներ Էրիկ Գրիգորյանը, Արթուր Նիկողոսյանը և Նվեր Պողոսյանը դասախոսություն կարդացին: http://aarhus.am/?page_id=12148

դ/ Չորրորդ հանդիպման օրակարգը ևս հագեցած էր, ինչպես վերապատրաստամն դասընթացներ, այնպես էլ հանդիպումներ և տարեկան հաշվետվությունների կազմմանն ու ներկայացմանը վերաբերող հարցերի քննարկում: http://aarhus.am/?page_id=13244



2. Օրհուս կենտրոնների համակարգողները մասնակցել են նաև այլ կազմակերպությունների կողմից ազգային մակարդակում անցկացվող վարապատրաստման դասընթացների, մասնավորապես

3. ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում՝ «Բնապահպանական արտակարգ իրավիճակների կառավարում և FEAT –ի ինտեգրումը» թեմայով դասընթացի մասնակցություն, ՄԱԿ-ի Երևանի գրասենյակում:

4. Սեպտեմբերի 11-ին Հայաստանի Օրհուս կենտրոնների աշխատակիցները մասնակցել են ԵԱՀԿ երևանյան գրասենյակի նախաձեռնած աշխատաժողովին, որը միտված էր քննարկելու շրջակա միջավայրի հարցերի շուրջ արդարադատության մատչելիությունը:



5. Նոյեմբերի 5-ին Հայաստանի Օրհուս կենտրոնների ներկաացուցիչները մասնակցեցին «Խազեր» էկոլոգամշակությանին ՀԿ նախաձեռնությամբ կազմակերպված կոնֆերանսին՝ «Դեպի Փարիզ՝ Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի Կողմերի 21–րդ նստաշրջանի նախաշեմին», կրկին ներկայացրին իրենց տեսակետը առավելապես կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող բնապահպանական խնդիրների լուծման նոր ֆինանսական մեխանիզմի՝ քաղաքացիական շրջանառու հիմնադրամների ստեղծման գաղափարի մասին, քանզի այն լուրջ միջոց կարող է հանդիսանալ համայնքների զարգացման և միաժամանակ կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող տարաբնույթ խնդիրները լուծելու համար:

6. Նոյեմբերի 10-ին Հայաստանի Օրհուս կենտրոնների ներկայացուցիչները մասնակցեցին «Հայաստանում բնական՝ հանքային եւ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու բնապահպանական կառավարումը, խնդիրներ եւ լուծման ուղիներ» թեմայով աշխատաժողովին:

7. Ծրագրի ղեկավարը և PR պատասխանատուն մասնակցել են ԲԿՑ հանդիպումներին:

8. Օրհուս կենտրոնների աշխատակիցները մասնակցել են նաև միջազգային հանդիպումների.

ա/ Հրազդանի և Եղվարդի Օրհուս կենտրոնների համակարգողներն ու Կենտրոնների տեղեկատվության պատասխանատուն ԵԱՀԿ աջակցությամբ մասնակցել են Վիեննայում կայացած Օրհուս կենտրոնների 2015 թվականի տարեկան հանդիպմանը, որտեղ ներկայացրել են Հայաստանի Օրհուս կենտրոնների միջև համագործակցությունն ուղղված ոլորտի կառավարման բարելավմանն ու թե ինչպես են Հայաստանի Օրհուս կենտրոնները խթանում որոշումների կայացմանը հանրության մասնակցությունը: http://aarhus.eng/?page_id=10442, պրեզենտացիաները կարելի է տեսնել հետևյալ հղումով http://aarhus.am/?page_id=131

բ/ Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողը ԵԱՀԿ աջակցությամբ մասնակցել է Թբիլիսիում կայացած «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնության Հարավային Կովկասի տարածաշրջանային հանդիպմանը: Նշված հանդիպումների մասին մյուս կենտրոնների աշխատակիցներին հաշվետվություն է ներկայացվել աշխատանքային հանդիպման ժամանակ, ինչպես նաև կայքի միջոցով:

http://aarhus.am/?page_id=10648&lang=en http://aarhus.am/?page_id=10626

գ/ Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողը մասնակցել է Մադրիդում կայացած՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի հովանու ներքո Աղտոտիչների Արտանետումների և Տեղափոխման Ռեգիստրի մասին Արձանագրությանն առնչվող 2–րդ միջազգային կլոր սեղանին:

դ/ Ծրագրի ղեկավարը դեկտեմբերի 8-10 մասնակցել է Ժնևում Օրհուսի կոնվենցիայի տեղեկատվության հասանելիության աշխատանքային խմբի հանդիպմանը՝ քարտուղարության ֆինանսական աջակցությամբ:

4/5.2 Հեռք բերված արդյունքներ

1. Կենտրոնների աշխատանքը առավել կազմակերպված, արդյունավետ, նպատակային, համախմբված և գրագետ է դարձել:
2. Ապահովվել է ՕԿ-ների միջև լավագույն փորձի փոխանակումը ու հաշվետվողականությունը: ՕԿ-ների ներկայացուցիչները իրազեկ են Շրջակա միջավայրին վնասի հաշվարկի ու հատուցման մեթոդաբանությանը, միջազգային փորձին, Բնապահպանական հիմնախնդիրների թաքնագիտական և իմաստնական ընկալումներին, համապատասխան գիտելիքներին տիրապետելու ու դրանք գրագետ կիրառելու միջոցով աղետների ռիսկերը նվազեցման միջոցներին:
3. Կենտրոնների աշխատակիցները տեղեկացել են Օրհուսի կոնվենցիային ազգային օրենսդրության որոշ դրույթների համապատասխանության անհրաժեշտության մասին, Օրհուսի կոնվենցիայի իրականացման հետ կապված գործընթացների վերլուծությանը, միջազգային փորձին, Հայաստանում կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված անկախ և անկողմնակալ մարմնի սեղծման կարևորությանն ու նախադրյալներին:
4. Տեղյակ են միջազգային գործընթացներին, այլ երկրներում ՕԿ-ների գործունեությանը, Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ԵԱՀԿ՝ ENVSEC համագործակցությամբ տարվող աշխատանքներին և այլն

3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:

Ծրագրի շահառուներ են հանդես եկել ՀՀ բոլոր մարզերի, բացառությամբ Արմավիրի, 15 քաղաքների՝ Արարատ, Ալավերդի, Ապարան, Գավառ, Գյումրի, Դիլիջան, Երևան, Եղեգնաձոր, Եղվարդ, Իջևան, Ստեփանավան, Վանաձոր, Կապան, Հրազդան քաղաքների, դրանց հարակից քաղաքային ու գյուղական մի շարք համայնքների բնակիչները, ոլորտային հասարակական կազմակերպությունները, հասարակական ակտիվ խմբերն ու նախաձեռնությունները, ՏԻՄ-երը, երիտասարդական և պատանեկան խմբերը, ուսանողները, ուսումնական հաստատությունները և այլն:

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Օրհուս կենտրոնները սերտորեն համագործակցել են ՀՀ մոտ 8 տասնյակ հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների, համայնքների ղեկավարների, մարզպետարանների, մասնավորապես բնապահպանության և քաղաքաշինության

բաժինների, ՀՀ բնապահպանական պետական տեսչության մարզային տարածքային բաժինների և մի շարք այլ պետական և համայնքային կազմակերպությունների հետ:

Այս տարվա ծրագրով, հուլիսի 1-ից, կենտրոնների հետ աշխատում են 2 փորձագետ՝ Արթուր Նիկողոսյանը՝ «Բնապահպանական հիմնախնդիրների թաքնագիտական և իմաստնական ընկալումներ»-ի փորձագետ, և Նվեր Պողոսյանը՝ «Աղետների ռիսկերի նվազեցման կարողությունների զարգացման» փորձագետ /կից ինքնակեն-սագրականները/, ովքեր արդեն իրականացրել են դասընթաց կենտրոնների համակարգողների համար:

Հունիսի 29-ից հուլիսի 30-ը Օրհուս կենտրոնները հյուրընկալել են ամերիկուհի ուսանողուհի Մարիել Կիեվալին, ով Ամերիկյան խորհուրդների մասնագիտական և միջմշակութային վերապատրաստման ծրագրի շրջանակներում Հայաստանում իրականացնում էր ամառային պրակտիկա: Ամերիկուհին ամառային պրակտիկայի հիմնականում ժամանակն անցկացրել է Եղվարդի Օրհուս կենտրոնում՝ մասնակցելով կենտրոնի առօրյա աշխատանքներին, այցելել Երևանի, Հրազդանի և Գավառի Օրհուս կենտրոններ՝ ծանոթացել կենտրոնների գործունեությանը, կատարած աշխատանքներին, ուսումնասիրել Օրհուսի կոնվենցիան, Հայաստանում դրա իրականացմանն ուղղված քայլերը: Այնուհետև անկախ գնահատում է իրականացրել կենտրոնների գործունեության վերաբերյալ՝ ներկայացրել առաջարկություններ կենտրոնների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու վերաբերյալ, ինչը ենթադրում է լրացուցիչ ռեսուրսներ:

4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ, քաղած դասեր և եզրակացություններ

Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ կարելի է համարել այն, որ.

1. Այս տարի, Օմբուդսմենի զեկույցի հրապարակումից հետո, որի մասին նշված է նախաբանում, Հայաստանի Օրհուս կենտրոնների PR պատասխանատուն և Երևանի Օրհուս կենտրոնի համակարգողը հրավիրվել են Օմբուդսմենի Շրջակա միջավայրի հարցերով օգնականի հետ հանդիպման, քննարկելու հետագա քայլերը և որոշել անել հնարավորը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ իրականացնելու ուղղությամբ: Կենտրոնները կայքի և ցանցերի միջոցով տարածել են Օմբուդսմենի զեկույցի հատկապես շրջակա միջավայրն վերաբերող գլխի տեղեկատվությունը, պարզաբանումներ տվել տեղական մակարդակում հանդիպումների ընթացքում: Այնուհետև կենտրոնները համատեղ նամակ են հղել Բնապահպանության նախարարին՝ ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանի 2014թ տարեկան զեկույցի

համապատասխան բաժիններում շրջակա միջավայրի կառավարման ոլորտում առկա բացթողումների ու թերությունների վերաբերյալ մեկնաբանությունների շուրջ նախարարության դիրքորոշումն ու պարզաբանումները ձեռքբերելու նպատակով http://aarhus.am/letters_2015/Orhusneri%20namak_29_05.pdf: ԲՆ-ն պատասխանել է, որ իրենք օմբուդսմենին պաշտոնական պատասխանելուց հետո, մենք կարող ենք Օմբուդսմենի գրասենյակից ստանալ այդ պատասխանը:

2. Ստեփանավանի Օրհուս կենտրոնի ակտիվ գործունեության շնորհիվ հնարավոր է եղել ՇՄԱԳ նախագծի հասարակական լսումների փուլում ազդել Ֆիալետովո համայնքի տարածքում նախատեսվող ոսկու հանքի շահագործման նախագծի վերջնական որոշման կայացման վրա, գործընթացը կասեցվել է, Բնապահպանության նախարարը պահանջել է հաշվի առնելով տեղաբնակների, փորձագետների դիտողություններն ու առաջարկությունները, օրենքներին հակասությունները, մշակել և քննարկման ներկայացնել նոր նախագիծ:

3. Ապարանի Օրհուս կենտրոնի ահազանգի ու գրության արդյունքում Արագածոտնի մարզի բնապահպանական վարչության ու Բնապահպանական տեսչության տարածքային բաժնի կողմից կատարվել են տեսչական ստուգումներ:

4. Հայաստանի Օրհուս կենտրոնների ցանցը շարունակել է անդամակցությունը ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի 3-րդ աշխատանքային խմբի գործունեությանը, մասնակցել քննարկումներին ու ոլորտի գործողությունների պլանավորմանը:

5. Օրհուս կենտրոնների հավաքագրած և պատկան մարմիններին ներկայացված առաջարկությունների որոշ մասը ներառվել են համապատասխան փաստաթղթում կամ տվյալ գերատեսչության կողմից ընդունվել ի գիտություն:

6. Իրականացված միջոցառումների արդյունքում ՀՀ բազմաթիվ բնակիչներ, ԶԼՄ-ների, ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի ներկայացուցիչներ իրազեկվել են ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային բնապահպանական համաձայնագրերի և մասնավորապես Օրհուսի համաձայնագրի դրույթների, ինչպես նաև դրանցով ամրագրված քաղաքացիների իրավունքների վերաբերյալ:

7. Էկոկրթական միջոցառումներին մասնակցել են ավելի քան 1000 երիտասարդներ և պատանիներ, որոնց շրջանում բարձրացել է շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ հետաքրքրվածության մակարդակը:

8. Ապահովվել է Օրհուս կենտրոնների առօրյա գործունեությունը ըստ կենտրոնների հուշագրում նշված նպատակների, ըստ փորձագետների խորհրդի կողմից հաստատված պլանների և սույն ծրագրի կողմից առաջադրված խնդիրների:

9. Ապահովվել է բնապահպանական խնդիրների լուծման նոր ֆինանսական

Մեխանիզմի հնարավորության մասին իրազեկումը, որի արդյունքում Գավառի քաղաքապետարանը գրավոր դիմել է Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ազգային համակարգողին քաղաքային լուսավորությունը էներգախնայող եղանակով կազմակերպելու համար, Արարատի մի շարք համայնքներ դիմել են կենտրոնի համակարգողին՝ ուղղորդելու իրենց այս ֆինանսական մեխանիզմը ներդնելու գործում:

10. Օրհուս կենտրոնների հավաքագրած և պատկան մարմիններին ներկայացված առաջարկությունների որոշ մասը ներառվել են համապատասխան փաստաթղթում կամ տվյալ գերատեսչության կողմից ընդունվել ի գիտություն:

11. Թուխմանուկի ոսկու հանքավայրի տարածքում << Մեգո Գոլդ>> ՍՊԸ կողմից իրականացվող ոչ օրինական շինարարական աշխատանքների վերաբերյալ Ապարանի Օրհուս կենտրոնի ահազանգի ու գրության արդյունքում Արագածոտնի մարզի բնապահպանական վարչության ու Բնապահպանական տեսչության տարածքային բաժնի կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, աշխատանքները դադարեցվել են::

12. Ստեփանավանի Օրհուս կենտրոնի ակտիվ գործունեության շնորհիվ հնարավոր է եղել ՇՄԱԳ նախագծի հասարակական լսումների փուլում ազդել Ֆիալետովո համայնքի տարածքում նախատեսվող ոսկու հանքի շահագործման նախագծի վերջնական որոշման կայացման վրա, գործընթացը կասեցվել է, Բնապահպանության նախարարը պահանջել է հաշվի առնելով տեղաբնակների, փորձագետների դիտողություններն ու առաջարկությունները, օրենքներին հակասությունները, մշակել և քննարկման ներկայացնել նոր նախագիծ:

13. Լուծվեց 2007թ. Կապանի Օրհուս կենտրոնի թիվ 1 հիմնախնդիրը՝ Սյունիք համայնքի այգիները և բանջարանոցները այլևս չեն ոռոգվի պոչամբարից եկող ծանր մետաղներով և քիմիկատներով աղտոտված ջրերով:

14. Կապանի և Քաջարանի բնակիչները այլևս չեն սնվի առողջության համար վտանգավոր/ՀՀ Ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի հաշվետվություն/ բանջարեղենով և մրգերով:

15. Կապան քաղաքի կենտրոնական թաղամասի բակը և փողոցները զերծ կմա հանքուղուց դուրս եկող դեղնաշականագույն ծանր մետաղներով աղտոտված ջրերից, որտեղ խաղում էին երեխաները, չորանալուց հետո քամուց և մեքենաների հոսքից բարձանում էր դեղին փոշին:

16. Ակնկալում ենք, կոյուղատարի թափումը Սյունիք համայնքի տարածքի ձորակ, որը համաճարակաբանների կարծիքով մեծ ռիսկ է, 2016թ. կլուծվի կենտրոնի կողմից խնդիրը բարձրացնելում հետո:

17. Ապօրինի ծառահատումների վերաբերյալ "Հայանտառ" ՊՈԱԿ-ի Կապանի անտառտնտեսությունից հայտնել են որ հարուցված է քրեական գործ, հետաքննությունը շարունակվում է, ավարտելուց նման ծառահատումներ չեն կատարվի:

18. Ակնկալում ենք, որ <<Զանգեզուր' կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ում իրականացվող ստուգումները, ավարտելուց հետո մեղավորները կպատժվեն և այլևս <<Զանգեզուր' կենսոլորտային համալիր>>-ի տարածքներում, որտեղ ընդհանրապես արգելվում է նույնիսկ չորացած, գետնին ընկած ծառը հանեն, ծառահատումներ չեն լինի:

19. Դիլիջանի կենտրոնը լայնորեն օգտագործել է Ֆեսբուկ սոց ցանցը որպես տեղեկատվության տարածման և օնլայն քննարկումների հարթակ, որոնցում անմիջական շահառուներ են հանդիսացել 3819 քաղաքացիներ https://www.facebook.com/groups/dilijangroup/ https://www.facebook.com/groups/1387196894935102/

20. Դիլիջանի համայնքի խմելու ջրի վատ որակի վերաբերյալ տեղեկատվություն է ստացվել և տարածվել, պատկան մարմինների ուշադրությունն է կենտրոնացվել և որոշակի լուծումներ է տրվել: https://www.facebook.com/albert.haroyan/videos/o.171983678573/973146622730928/?type=2&theater

21. Դիլիջանի ՕԿ-ի նախաձեռնությամբ Էկոկրթության , տեղեկատվության տարածման և բնակիչների շահերի պաշտպանման՝առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի, կազմակերպվել է մաքրման ակցիա և մի աբողջ թաղամաս է մաքրվել: https://www.youtube.com/watch?v=GwFEWpO3hQ&feature=youtu.be

5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ

- Ծրագրի ընթացքում էական դժվարություններ և խոչնդոտներ չեն եղել, սակայն եղել են չնախատեսված իրավիճակներ, որոնք ծրագրի ընթացքը քիչ թե շատ խաթարել են /կից տես հավելված 2-ը/.
- Քանի որ հուլիս օգոստոս ամիսները հիմնականում հանգստի ամիսներ են,

ուստի այդ ընթացքում կենտրոններն ավելի պասիվ են եղել միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու առումով, բայց ակտիվ աշխատել են տեղեկատվության ձեռք բերման և տարածման հարցերում:

- Եղեգնաձորի ՕԿ համակարգողը դիմել է պայմանագրային ծառայությունները դադարեցնելու խնդրանքով, հայտարարվել է նոր մրցույթ, ընտրվել են նոր համակարգողներ, ճիշտ է կենտրոնի աշխատանքները դադարեցվել են 1,5 ամսով, բայց սեպտեմբերի 10-ից նորից բնականոն հունով շարունակում է աշխատել:

6. Ծրագրի գնահատում և շարունակականություն

Ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների ամբողջական գնահատումն իրականացվել.

1. Ծրագրի ղեկավարի կողմից նախապես մշակված վիճակագրական հաշվետվության ձևի վրա ամենօրյա գրանցումներ կատարելով:
2. Կատարած գործողությունների վերաբերյալ նյութեր, նկարներ, օրակարգեր, արձանագրություններ տրամադրելով ծրագրի ղեկավարին և տեղեկատվության պատասխանատուին:
3. Ամենօրյա հեռախոսազանգերով, էլ. Փոստի միջոցով և www.facebook.com սոցիալական ցանցում ստեղծված աշխատանքային խմբում քննարկումների միջոցով:

ՀԿ-ի կողմից իրականացված գործողությունները վերաբերում են ծրագրում նշված բոլոր խնդիրներին, որոնց իրականացումը բերել է որոշակի լուծումների, հասարականպաստ որոշումների և ակնկալվող արդյունքների:

7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:

(Տեսեք կից ֆայլերը կենտրոն առ կենտրոն, անգլերեն, հայերեն)

8. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր

Հաշվետվությանը կցվում են կենտրոնների այս տարվա գործունեությանը վերաբերող որոշ լուսանկարներ:

Ստորև ներկայացվում են Հայաստանի Օրհուս կենտրոնների գործունեության և մասնակցության վերաբերյալ բոլոր այն մամուլի հրապարակումների և տեսանյութերի հղումները, որոնք տեղադրվել են համացանցում. *(մանրամասն տեղեկատվությունը կից Հավելված 1-ում, հայերեն և անգլերեն լեզվով):*

Հաշվետվությունը կազմեցին՝

Լիաննա Ասոյանը՝
Հայաստանի Օրհուս կենտրոնների ծրագրի ղեկավար
Հասցե. ՀՀ. ք. Գավառ, Դաշտոյան 1/16
Հեռ. - (+374) 264 6 15 11

Բջջ. (+374) 77 76 46 41

E-mail: blejanli@gmail.com

Մարի Չաքրյանը՝

Հայաստանի Օրհուս կենտրոնների ծրագրի PR պատասխանատու

Հասցե. ՀՀ. Ք. Երևան, Գ, Մահարի 64

Բջջ. (+374) 93 991212

E-mail: aarhusnews@gmail.com,

Գևորգ Պետրոսյանը՝

Հայաստանի Օրհուս կենտրոնների ծրագրի ղեկավարի օգնական

Հասցե. ՀՀ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 12ա

Հեռ./ֆաքս + 374 312/ 3 29 13 Բջջ. + 374 93 714 533

E-mail: gyumricenter@gmail.com, aarhuscenter@gyumri.am